ՈՐԱՐԱՏ

ԱՄԱՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ,

ԲՐՈՒՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՑԻՆ.

ԹԻՒ Ե. ՏԱՐԻ Ի. ՄԱՑԻՍ 54

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ. Անմահութիւն. (Քարգմ.) Գ. Ե. Ա. 194
Ձ. Ծոռ Հայաստանեայց. (շարունակ. եւ վերջ.) Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեան 205
ՊԱՏՄԱԿԱՆ. Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ (շարունակ.) Ռոստոմ—ըէկ Երզնկեանց 215
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ֆրդուսի, (Քարգմ.) Սամուէլ Գիւլզատեանց . . 227
ԱԶԳԱՑԻՆ. Նուիրատուութիւնք Ատրպատականի Հայոց. — Հայրենեաց բարեգործական ընկերութիւն Տփղեաց. — Նուիրատուութիւն Գեր. Սերովբէ Եպիսկոպոսի. — Նուիրատուութիւն Պ. Կոստանդնի Ալիխանեան. . 231
ԱՑԻ ԵՒ ԱՑԻՔ. 238
ՊԱՇՏՕՆ ԱԿԱՆՔ. Ցօրագրութեանց Սիմեօնի, վարչականք. . . . 239
ԱԶԴ. 241

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

ՌՃԼԶ—1887

ՑՈՒՑԱԿ ՎԱՃԱՌԵԼԻ ՄԱՏԵՆԻՑ·

ԳՐԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

	Ր.	Կ.
Այրիվանք կամ Գեղարդավանք	—	20
Աստուածպաշտութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ	—	70
Արարատ Ամնագիր տարեկան ամբողջ կազմեալ	2	—
Աւետարան Համաբարբառ վկայութեամբ	—	80
Բենիամին Ֆրանկլինի կեանքը	—	30
Գիրք Հանդիսակատարութեանց կայսերական տօնից	—	50
* Գոթղոլիա ողբերգութիւն	1	—
Դատաստանագիրք Հայոց Մխիթար Գօշի	3	—
Դաշնագիր	—	15
Դասագիրք բաղդատական Աշխարհագրութեան	1	—
Դասագիրք Ընդհանուր պատմութեան.—Հին դարուց	1	—
Նոյն.—Միջին դարուց	1	—
Դասագիրք Քրիստոնէական Հաւատոյ· Աբբէ Եպիսկոպոսի	—	20
Դասագիրք Քրիստ· վարդապետութեան Գ· Ե· Ա յվազեան	—	40
Դպրոց տարեկան 1874—76	2	—
* Եօթն խօսք առ տղայս	—	20
* Թուաբանութիւն զարգացելոց Ա· Գալշեայեան	1	—
* Թամագիրք ատենի	8	—
Թամագիրք ձեռաց	2	—
* Լոբան Աւագ ուրբաթ	—	10
* » Առումն Կ· Պոլսոյ	—	10
* » Արև	—	10
* » Զատիկ տեառն	—	10
* » Երկինք և երկնայինք	—	10
* » Հռիփսիմէ	—	10
* » Հնութիւնք Եգիպտոսի	—	10
* » Մեծն Ներսէս	—	10
* » Ս· Խաչ	—	10
* » Տօն Ծննդեան	—	10
* Խանգարմունք Հայկաբանութեան	—	50
Կ ամուրիկէ մայր եկեղեցի Վաղարշապատայ	—	50
Կանոն աշակերտաց Գէորգեան Ճեմարանի	—	10
Կանոն ընկերութեան Հայոց Ճաւայի	—	10
Կանոն ծխական Դպրոցաց	—	20
Հանդէս Ր· տարեդարձի Գէորգեան Ճեմարանի	—	10



Ա Ր Ա Ք Ա Տ

Թիւ ե. — ՇՐՋԱՆ Ի. 1887 ՏԱՐԻ Ի. ՄԱՑԻՍ 31.

ԿՐՕՆԱԿԱՆ

ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ.

Մարկ. 16. 1—14.

—o—

Ցարուբաբէլն կառնեա այն, յարուբաբէլն կառնեա դու, ով իմ հոգի դառնալու մարմին, քիչ հանգստանալուդ յետոյ. անմահ կեանք կպարգեւի քեզ նա, ով որ քեզ ստեղծել է. ալէլուեայ:

Էլի բռնաբնելու համար ենք դանդաղում հոգով. երկրիս տէրը կգայ, կհաւաքի մեզ՝ խուրձերիս, որ մեռնելով, դանուել էինք՝ բռնաբնելու, հառնանալու համար, որ հնձուեինք: Ալէլուեայ:

Կղոպշատակ.

Խաչուած Քրիստոսի յարուբաբէլն առնելն ու դարձեալ երեւելն՝ մատամբ այնպիսի մի ոճն է, որ կատարում ենք երկրիս վերայ՝ իբրեւ ուրախալից յիշատակ մեր իսկ անմահութեան:

Նորա յարութիւն առնելն իւր գերեզմանից՝ յիշեցնում է մեզ այն մեծ՝ այլևայլ փոփոխութիւններն, որ պէտք է լինին մեր հոգւոյ կողմանէ ևս։ Չող դառնալու գոյութիւն չէ մեր հոգին, ու չէ կարող հող դառնալ։ Մեր հոգին միշտ գործում է ու չէ դադարում գործելուց, ինչպէս որ աշխարհքիս մէջ եղած, ամենակարող Արարչից ստեղծուած բոլոր ուժերը, նոյնպէս էլ կմնայ մշտական և անդադար գործունէութեան մէջ։ Ցիսուս Ջրիստոս մեր փրկիչն, որ մեզ օրինակ է իւր կեանքովն, որ մեզ օրինակ է իւր մահովն, օրինակ է նոյնպէս այն բանին, որին մենք ակնկալութիւն ունինք մեր մահից յետոյ։

Մարդկութեան վերաբերեալ երեք մեծ ու շատ սուրբ բան կայ, որոնց մօտ՝ ամեն ուրիշ բան շատ փոքր նշանակութիւն ունի,—երեք գաղափար կայ, որոնց միայն մարդուս բանական հոգին, բարձրանալով, կարող է հասնել։ Եւ ոչ թէ մի ուրիշ՝ մեզ յայտնի արարած, որ Աստուած ստեղծել է։—երեք համոզմունք կայ, որ ամենայն հոգիների համար սրբութիւն է, և եթէ չունենար մարդս այդ երեք սրբութիւնն, էլ մարդ չէր լինիլ։ այս երեք մեծ ու շատ սուրբ բաներն են՝ այն մտածմունքը թէ՝ ամեն բանի մէջ կայ իշխող ու կառավարող Աստուած—ը, ձգտումն Աստուծոյ մօտենալու՝ կատարելութեան և յաւիտենական կեանքի յոյսը։

Ով որ այս երեք սրբութիւնն իւր սրտում հաստատմութեամբ պահում է, այն մարդն է, որ գնում է Ջրիստոսի ճանապարհովը։ նա է, որ փրկութեան ճանապարհումն է, նորա սրտին է, որ երբէք չի դուլս գալ, չի հեռանալ Աստուծոյ այն խաղաղութիւնն, որ աւելի բարձր երջանկութեան նախաճաշակն է։

Եթէ որ մեր հոգւոյ անմահութեան և Աստուծոյ անհուն բարձրութեան վերայ մեր ունեցած մտածմունքն ամեն ժամանակ մեր մէջ բաւական կենդանի պահուէր, աւելի քիչ կտեսնէինք թերհաւատութեան, ունայնասիրութեան և ստելութեան գործեր, մեռնելուցն էլ քիչ երկիւղ կունենայինք։

Սորա համար ուզում եմ այսօր խորամուխ լինել այն փառաւոր մտածման մէջ թէ՝ կայ Աստուած՝ ու ես նորա ձեռքի գործն եմ ու յաւիտեան անապական ու անեղծանելի եմ։ Ուզում եմ մտածել իմ ունեցած աւելի լաւ, աւելի վսեմ

նշանակութեան ու կոչման վերայ, իմ աւելի բարձր կեանքիս վերայ՝ ու զօրանալ, ուրախանալով ու մխիթարուելով այն յուսովն, որ Աստուած ինքն դրել է ոչ միայն քրիստոնէի սրտի մէջ, այլև յայտնել է աշխարհիս երեսին բնակող ամեն մարդոց, իւրեանց իսկ մտքի վկայութիւնովն։

Ես ծնած եմ՝ ոչ թէ անհետ կորչելու, այլ մշտատև ու անմահ լինելու համար։ Այդ աւետիքը մեզ տուել է Քրիստոս։ Կգայ օրն, որ ես այլ ևս այս աշխարհիս չեմ պատկանիլ, այլ մի ուրիշ աշխարհի բնակիչ կլինիմ, ուր որ կսկսեմ ապրել երջանիկ կեանքի մի աւելի բարձր, կամ ստոր աստիճանի՝ կամ վիճակի մէջ, նայելով թէ՝ արդէն երկրաւոր կեանքումս իմ հոգիս ինչպէս է նախապատրաստուել հանդերձեալ կեանքի համար։

Ես կոչուած եմ մշտատև յաւիտենական և անմահ կեանքի համար։ Այս մարմինն, որ այժմ ունիմ և որով ապրում եմ, երկրիս հողից է առնուած ու էլի հող պէտք է դառնայ. բայց անապականն ու անեղծանելին՝ անեղծ է, անապական է, աստմ է ինձ Սուրբ Գիրքն։ Իմ հոգիս ուրիշ՝ նոր հանգամանաց մէջ կմտնի ու մի աւելի աղնիւ հագուստով ծածկուած՝ նման՝ աւելի աղնիւ վայելքի մասնակից կլինի։—Ի զուր աշխատած կլինինք խելք հասցնելու, թէ որպիսիք արդեօք կարող էին լինել այն հրաշալի այլափոխութիւններն։ Անմտութիւն է ուզենալն իմանալ թէ՝ ինչ վիճակի մէջ կլինի մարդուս հոգին՝ նորա մեռնելուց յետոյ։ Այդ կնշանակէր մեր մարդկային տկար ու սահմանաւոր խելքովն ուզենալ թափանցել, հասկանալ աստուածային անսահման ու ամենակարող զօրութեան գաղտնիքն, ու մեր մարդկային անզօր տեսութիւնովը խորամուխ լինել աստուածային անհուն իմաստութեան խորքը։ Ի՛նչպէս պէտք է մեզ հասկանալի լինէր այն, ինչի համար որ այս երկրիս վերայ չունինք համեմատութիւն անելու ամենայն նմանութիւններն, և ինչի համար որ ոչ մի լեզուում չկան այն բառերը, որով կարողանայինք բացատրել մեզ՝ մեր հասկանալ ուզեցածն։ Պօղոս առաքեալն անգամ պախարակում է իրանց խելքից դուրս բանը հասկանալու եռանդից ընկնողների անտեղի հետաքրքրութիւնն, անպատշաճ ջանքն ու աշխատութիւնը. թէ ինչ կլինինք մեր մահից յետոյ, այդ մասին ունի նա այս խոնար-

հասիրտ խոստովանութիւնը միայն «Ահաւասիկ ինչ գիտեմ, ու ըստ կարծեաց է (երևոյթով)»։

Բաւական է, որ քրիստոնեան՝ մեր սրտին անդորրութիւն պարգևող այն համոզմունքն ունի թէ՝ մեզ սպասում է յաւիտենական կեանք, որ մեզ համար սահմանուած է ախտարհիս սկզբից։ «Աչք ժամանակ Աստուած մեր աչքերից ամենայն արտասուք կորբի, ու մահն այլ ևս չի լինիլ։ չեն լինիլ ոչ վիշտ, ոչ կսկիծ և ոչ ցաւ։ ինչու որ առաջինն անց է կացել»։

Ա. խարհիս Փրկիչն Յիսուս՝ իւր մահուանից մի քանի րոպէ առաջ՝ իւր հետ իսաչուած աւազակների մէկին ասեց յաւիտենական կեանքի քաղցր վխիթարութիւնը։ Նա ասաց նորան՝ չունչը կորուելով՝ «այսօր ինձ հետ դրախտումը կլինիս»։

Բայց մարդկային հոգւոյ յաւիտենական և անանցանելի բնութիւն լինելու մասին յայտնել է Աստուած ամեն մահկանացու մարգոյ։ Երկրագնդիս վերայ ապրող ամեն ազգերը հաւատում են իրանց հոգւոյ տևողութեանը, յարութեանը։ թէև մի աղգ միւսից ընդունած չլինի այս երջանկացուցիչ ուսումն։ ինչու որ Աստուած մարդկային բանականութիւնն ու նորա օրէնքներն այնպէս է կարգել, որ հասկացողութիւնն աւելանալ սկսում է թէ չէ, ինքն իրան հարկագրվում է մտածել ու յիշել, որ անվերջ ապագայ ունի։

Սորա համար ամեն կրօններն աւետում են այս մխիթարութիւնն։ և մինչև անգամ կռապաշտները լաց չեն լինում իրանց մեռելների սիրելի դիակների վերայ, առանց իրանց թաց աչքերը դարձնելու միւս կողմը դէպի հանդերձեալ կեանքը գերեզմանի մոնելուց յետոյ։—Այս ընդհանուր և միահաւան համաձայնութիւնն, այս ընդհանուր հաւատն Աստուծոյ չէ՞։

Եւ ինչպէս կարող էլ էինք յաւիտենական ապականութեան մեզ վերայ սարսափ բերող մտածմունքի մէջ ընկնել, քանի որ կենդանի ու անկենդան բնութիւնը, քանի որ Աստուծոյ համատարած արարածները հակառակն են ցոյց տալիս։ Ինչ որ մի անգամ ամբողջ աշխարհումն կայ, նորա միջից էլ չի կարող կորչիլ։ Փոշու ամենամանրիկ կտորն, որ դու ոտովդ կոխում ես ու վրան մեն գալիս, մի ժամանակ մի ժայռի կտոր էր։ Ժայռն էլ չկայ, բայց իւր մասերը դեռ ամեն տեղ կան։—Խելքդ ինչ է ասում, երբ որ մտածում ես թէ՝ եթէ որ ամենամեն-

րիկ բանն մշտական ուշադրություն ունի, թէ և ժամանակների ընթացքում հագուստ անգամ էլ փոխի իւր կապակցութիւնն ու հանգամանքներն, միթէ այդ նոյնապէս՝ ու այնավա՞ն բանն, որ մենք ճանաչում ենք այս ստեղծուած բոլոր աշխարհիս մէջ, միթէ մարդկային հոգին միայն բացառութիւն պիտի կազմէր։ — Գանի որ փոշու շամանդաղն, այնքան ժամանակ տիեզերքում պէտք է մնայ, որքան ժամանակ որ տիեզերքս կայ, միթէ մարդուս հոգին, որ միայն կարող է մտածել Աստո՞ծոյ և անմահութե՞ան վերայ, միայն մի կարճ ժամանակուայ համար աշխարհիս վերայ պիտի լինի։

Ստեղծուած արարածների սահմանի մէջ մենք զանազանում ենք դեռևս, անկենդան նիւթը և որոշ գոլորշի ոժիժ, որ այս անկազմ ու անյարդար նիւթերը կապակցում են ու հոգևորում։ Ա՛յն ծաղիկներն, որ քո պարտէզդ քեզ համար բուսցնում է, հողից են յառաջ գալի, ջուրը, օդը, հողը, լոյսը սնունդ են տալի բոյսին. բայց ամեն մի փոշու շամանդաղից, կամ լուսի ճառագայթից բոյս չէ գոյանում։ Մի գոլորշի ոյժ կայ, որով խոտի մանրիկ թերթիկներից ու կաղնիից՝ նոյնպէս խոտի փոքրիկ թերթիկ՝ կամ կաղնի կարող է յառաջ գալ, և ոչ թէ ո՞րևէ բան։ Այս ծածուկ զօրութիւնը, կամ գաղտնի ոյժն, որ պիտի համարենք բոյսի իբրև հոգին, գիտէ բոյսի համար ամենայարմար սննդարար մասերն իրան քաշել։ Այս անտեսանելի, անբացատրելի հակամիտութիւնից է, որ ծաղիկը ծաղիկ է դարձել։

Այժմ ի՞նչպէս ես կարծում դու, արդեօք անկենդանի նիւթն է, որ իւր կապակցելուվն, այսպիսի գաղտնածածուկ զօրութիւն է յառաջ բերում, թէ գաղտնի ուժերի թագաւորութիւնն է, որ անկենդան նիւթի մէջ գործում է ու նորան հագորդում է տեսակ տեսակ կերպեր — կեանք, շարժուն ու սնունդ։ — Եթէ ինքն իրան անկենդան նիւթն տիեզերքից ոչնչանալ չէ կարող, կարծո՞ւմ ես դու, որ ո՞չնչէլի ա՞նկէ աղնի՞ա ա՞նկէ լա՞ հաղ՝ կկորչի։ — Երբ որ բոյսն իւր ուժից ընկնում է, թառամում է ու էլի հող է դառնում, միթէ նորա մէջ առաջ եղած գործողութիւնն էլ ոչնչացա՞ւ։ Դու այդ չես նկատում. նա շարունակում է գործել ուրիշ հանգամանաց մէջ։

Այսպէս էլ մարդ կոչին հոգին, մի ուրիշ բարձր, մի անուանա-

արանչելի այժ է, որոյ հետ մեր հանուագած ուժերից ոչ մէկը համեմատուել չեն կարող։ Արդարև, ոի այնքան անմիտ կլինէի, որ մոքիցն անցկացնի թէ՝ այս մեր՝ հողից բաղադրուած մարմինն է մեր հոգին նոր յառաջ բերել, ու երբոր դիակը կրկին ժի օր հող կդառնայ, հոգին էլ հետը կոչնչանայ։ Մ՛թէ հոգին չէ, որ նորան խնամք է տանում, կերակրում, անբաղդութիւնից պահպանում, նորան շարժում, նորան ըստ կամի գործ ածում իբրև իւր գործիքն։

Արդարև, միայն այն մահկանացու մարդը կարող է կասկած ունենալ մեր անմահութեան մասին՝ որ իւր կեանքումն արժանի չէ անմահ լինելու, կամ պատճառ ունի անմահո–նի–նէց վախենալու։ Ի զուր են ուզում իրանք իրանց խաբել։ Ի զուր են ուզում իրանց բանականութեան սպանիչները լինել։ Բարձր ձայնով ասում է իրանց մէջ իրանց խելքը՝ քո հոգիդ կարող չէ՜ անհետանալ։ Նա կշարունակի իւր կեանքն և իւր դատաւճիռը կրնդունէ։ Ո՛վ յանցաւոր մարդ, Աստուած կայ, և ինչքա՜ն ոչ փրկական կայ Աստուած, նայնքա՜ն և քա՜ն անմահ է, ու քո գործերդ եռևիյդ գալիս են դէպի յաւիտենական կեանքը։

Մարդկային հոգին, աստուածային լուսոյ անեզր ովկիանոսից դուրս եկած այս կայծն ու երկնքի վեհ զաւակն, որ իշխում է բոյսերի, քարերի և կենդանիների վերայ, որ բարձրանում է դէպի երկինք, հաշվում է աշխարհների ընթացքն և նո ասպուածային ձագման ոչ նէրւէն յայտնո–նի–նում ինքն իրան գիտակից է։ այս հոգին, որոյ մոքերը սարերի ու ծովերի վրայիցն են թռչում, գնում և Ամենազօրի աթոռին մօտենում, ինչ նո հասաք եղաղ ոչ քան է ամեն տեղ։ Նա իւր անձի անթերի ճանաչողութեամբն ինքն նո հասաք միայն կայ ինքնագլուխ, և ոչ թէ իբր ուրիշ մի արարածի մասն։ Նա մի փոքրիկ աշխարհ է կազմում ինքն իւր համար, նա միայն իւր զգայարանաց միջնորդութեամբը կապակցած է միւս արարածոց հետ։ Շատ բան փոխվում է նորա շուրջը։ միայն ինքն մնում է իւր համար։ դիտում է ամեն բան և այդով զարգացնում է իւր ոյժն։ Եթէ մարդկային հոգին ինչ նո հասաք ստեղծուած չլինէր, եթէ նորա գոյութեան նպատակը լինէր աշխարհումս ո–ջինչ բանների ծառայելու, իւր արժէքը կկորցնէր, հէնց որ անհնազանդին աշխարհիցս այն ո–ջինչ բաները, որոյ մեռն է ինքն։ Հոգւոյ գոյու-

թիւնը մարմնոյ համար չէ, և իբրև նորա գործիք ստեղծուած չէ, այլ մարմինն է ստեղծուած իբրև հոգւոյ գործիք որ նորան պիտի ծառայի աւելի բարձր նպատակների համար։

Հոգւոյ անկախութեան՝ կամ ինքնիշխանութեան դիտելու արժանի այս զգացումն, այս հաստատ համոզումն թէ՝ նա կայ ինքն իւր գլխուն, է՞ր անանցանելի և անհաղթելի ապրուստին երաշխաւորութիւնն է։ Այսպէս և ամենաւեմ հոգին, Աստուածութիւնն, որ մեզ ստեղծել է, ամբողջի մասը չէ, ուրիշ մի բանի մասը չէ. նա ինքն իւր համար նպատակ է — նա յաւիտենական է։ Ով որ կարող լինէր իւր հոգւոյ անմահութեան մասին կասկած ունենալ, նա կասկածած կլինէր, ով Աստուած, Ձ՞ մասին՝ թէ Դու կաս։

Եթէ մարդկային հոգին ծնած լինէր այս երկրաւոր կեանքի վաղանցիկ օրերի համար, էլ հարկաւոր չէին լինիլ այն ամենայն՝ կարգից դուրս գերազանցութիւններն, որ Աստուած նորան պարգեւել է։ Եթէ նա՝ ուրիշ կենդանեաց նման՝ ստացած լինէր միայն բնական գրգիռներ ու հակամիտութիւններ, իւր բոլոր անելու գործն էլ կլինէր նոյնպէս ոչ թէ ուրիշ մի բան, այլ միայն կկարողանար հոգալ իւր սնունդի և իրան պահպանելու մասին։

Այդպէս որ լինէր, էլ ինչ օգուտ պիտի ունենայինք մեզ համար մեր հոգւոյ փառաւոր ընդունակութիւններն։ Ինչո՞ւ համար ենք մենք ստիպուած, հանգամանաց մի զարմանալի կապակցութեամբ, կատարելագործելու այս մեր ընդունակութիւնները։ Ինչո՞ւ համար աստուածաճանաչութիւն պէտք է ունենայինք, երբ որ այդ Աստուածն, որոյ աթոռոյ առաջը մեր հոգին երկրպագութիւն է անում, մեր յաւիտենական Հայրը չլինէր։ Ինչո՞ւ համար է Աստուած դրել մեր սրտի մէջ այն անանցանելի ցանկութիւնն, որ ուզում ենք ապրել, և ուզում ենք, որ մեր կեանքը ևւոդական լինի, եթէ որ ամենազօրեայ մեր երկնաւոր Տէրն այդ մեր ցանկութեանը չպիտի հասցնէր մեզ։ Մի՞թէ մենք ամենաչնչին կենդանուց էլ աւելի թշուառ չէինք լինիլ՝ մեր ունեցած բարձր տեղեկութիւններովը, գիտութիւններովն ու յատկութիւններով, եթէ որ հոգւոյ անմահութիւնը մի պատրանք, մի խաբէութիւն լինէր։ Կենդանին՝ մահը չէ իմանում, ի՞նչ է։ Նա անհոգ կերպով

սորուած է եկող ժամու համար։ Ինչո՞ւ ամենիմաստն Աստուած մարդուն տուել է այն ձիրքն, այն միտքն, որ նա կարող է աչքը ապագայի վերայ ձգել, ապագայի վերայ մտածել։—Կամ կամ՝ մարդ, միթէ կկարողանաս Աստուած հայհոյել ու ասել թէ՝ ապագայի վերայ հասկացողութիւն ունենալու կարողութիւն նորա համար է մեզ տուել, որ աւելի՛ թշուառ լինինք։—Եթէ որ այդպէս լինէր, պէտք էր ասէինք թէ՝ ուրեմն Աստուած իւր իմաստութիւնը փառաւոր կերպով յայտնել է քարերի, կենդանիների, ու բոյսերի վերայ, ու, մարդուն եկած ժամանակ, իւր իմաստութիւնն աննպատակ կորել է։ Կենդանիքն իրանց ստոր ուժերով հասել են այնպիսի մի գոհացուցիչ վիճակի, որպիսին կարող էին ունենալ իրանց բնութեանը համեմատ. բայց մարդն՝ իւր շատ աւելի բարձր կարողութիւններով՝ կատարելութեան հազարերորդ մասին էլ չէ հասնում, կատարելութեան եմ՝ ասում, որին հասնելու համար մենք ընդունակութիւն ու յարմարութիւն ունինք։—Ա՛յս իսկ պատճառաւ այս կեանքով, որ ունինք այս աշխարհումս, մենք դեռ չենք հասնում մեր կոչմանն, որ անկատար է մնում։ Մենք մեր մէջն ունինք անսահման կատարելութեան հասնելու սերմն. ուրեմն և սահման չունենալը մեր կատարելութեան՝ է մեր ստեղծման յարացնող մասն, կամ՝ յաւելուածը. եթէ մենք մեր մտքին անցկացնէինք՝ թէ այս աշխարհս մի խառնակ քաոս է, գերագոյն իմաստութիւնն ինքն իրան հակասում է. — այսպիսի մի բան մտքից անցկացնելը խելագարութիւն կլինէր։

Դու հաւատում ես, որ Աստուած կայ. բայց եթէ ուշանայիր, ով յանդուգն մարդ, առողջ դատողութիւնդ կորցրած ժամանակդ, յիմարանալով, ուրանալ նորան, Որոյ ձեռքի գործն է հրաշալի կերպով կարգաւորուած բոլոր այս աշխարհս, այն ժամանակն էլ չէիր կարող, որովհետև ամեն մի աստղ, ամեն մի ծաղիկ, քո ներքին դատաւորդ, քո կեանքիդ մէջ բոլոր տեսածներդ ու քո և ուրիշների գլխին եկածները և լայնատարած աշխարհիս ազգերը՝ հազար ու մէկ լեզուով՝ բարձր ձայնով քեզ կասէին թէ՝ մի ուրանար, որ Աստուած կայ. Նա կայ, կայ։

Եւ եթէ Աստուած կայ, և եթէ նա ամենակատարեալ, ամենատուրը էակն է, ինչպէս սիրտ կանես մտքիդ անցկացնել, որ նա արդարադատ չէ։ Իսկ այն թշուառ մարդն, որ չէ դա-

ասում թէ՝ մեր հոգին մշտակաց է, որ չէ հաւատում, թէ հատուցում կայ, որ ամեն մարդ իւր գործին համեմատ պիտի ստանայ Նորանից, որ առաղերից վերևում է բնակվում, — այնպիսի մոլորուած, ինքն իրան կորցրած մարդն մի անկատար Աստուած է ընդունում. այնպիսի մարդը կարծում է ու հաւատում, որ մարդուս սահմիկ զգայուն սրտի մէջ աւելի բարձր արդարասիրութիւն, արդարադատութիւն կայ, քան թէ ամենատուրը Աստուծոյ մէջ։

Բայց Աստուծոյ արդարութեան ու ճշմարտութեան հակառակ բան կլինէր, որ առաքինի մարդիկը, բարեպաշտ քրիստոնեաներն, որ առաքինութեան համար, և առանց իրանց կողմից մի մեղք ունենալու՝ աշխարհիս մէջ ամենադժուար ձախորդութիւններ, անբաղդութիւններ քաշէին, ու իրանց քաշած թշուառութեանց փոխարէն աւելի բարձր երջանկութիւն չստանային. կամ թէ չարագործները, մարդկային ազգի բնաւակալներն իրանց օրերը փառաւոր և ուրախ կերպով անցկացնէին և անպատիժ՝ իրանց նման մարդասէր, ընտանիք ու ամբողջ աղգեր կարողանային անպատիժ հալածել, ամեն կերպ նեղութիւններ տալով նորանց ու այրելով։ — եթէ որ աշխարհիս մէջ չարագործներին դատող ու առաքինի մարդոց էլ վարձատրող չլինէր, էլ ով սիրտ կանէր աշխարհումս առաքինութիւնը սիրել, առաքինութեան համար մինչև անգամ իւր կեանքն զոհելու պատրաստ լինել։

Թէև ասում են թէ՝ առաքինութիւնն ինքն մարդուս համար վարձատրութիւն է.—բայց աւաղ, միշտ այդպէս չէ։ Պատահել է շատ, որ այս՝ այն մարդն, աղնիւ զգացմունքով լցուած, զոհել է կեանքի ամենայն ուրախութիւններն ու մեռել է ցաւերի, նեղութիւնների ու տանջանքների մէջ, հաւատարիմ մնալով Աստուծոյ օրէնքներին։ Այս աշխարհիս մէջ այնչափ քիչ է պատահում, որ առաքինութիւնը մարդուս վարձատրի, ինչպէս որ միշտ չէ պատահում, որ մարդուս մոլութիւնն ինքըն այս աշխարհիս վերայ նորան պատժի։ Բայց ինչպէս որ նեղութիւններ, ցաւեր քաշող քրիստոնէին, այնպէս էլ մեղքերի մէջ թաղուած մարդոց սիրտն վկայում է, և այդ երկու տեսակ մարդիկն էլ զգում են, թէ վերևում կայ Նա, ով պատժում ու փոխարէնը հատուցանո՞ղ։

Ա՛յո, վերևումը, աստղերից բարձրում՝ կայ միշտ Հատուցանողն։ Էլ աւելի լաց մի լինիր, մի վհատիր, ով դու անմեղ հոգի, որ անտէր, անպաշտպան ես մնացել, ոչ ոք երեսիդ մտիկ չի տալիս, ոչ ոք չի մեղքանում քեզ, ոչ ոքի սիրտը չէ ցաւում քո վրայ՝ ու հալածանք ես կրում ի զո՜ւր տեղն՝ անխիղճ, անգութ, չար հոգի ունեցող մարդուց։ Ծաղթանակիդ օրը կգայ։ Տա՛ր քաջ սրտով քո խաչդ, ինչպէս որ Քրիստոս տարաւ՝ մինչև գերեզմա՜ն մնելը։ Դու էլ յաւիտեան կապրես Նորա նման, ու յաւիտենակա՜ն կեանք կժառանգես։

Մէնթ անմա՜հ ընթ։ Ծաւիտենական որս չենք մահուան։ Ա՛յ որք մնացած երեխայք, ինչո՞ւ էք անմխիթար լաց լինում ձեր հօր, ձեր մօր գերեզմանի վերայ։ Ով հայր, ով մայր, ինչո՞ւ ես այդքան տխրում, ցաւում, քո մեռած երեխայիդ կորցնելուդ վերայ։ Նա քեզանից առաջ ընկաւ ու գնաց լաւագոյն աշխարհները։ Բայց դու անմահ ես, նորան էլի կգտնես։ Նա քեզ համար կորած չէ։ Առուած այսպէս էր կամեցել։ Ա՛յս վիճակին յաւիտենական նախասահմանութիւն էր աշխարհիս նախագծի մէջ։ Առուած քեզ էլ կկանչի։ Դու կենդանեաց աշխարհումըն երջանկութեան մէջ կլինիս, մինչդեռ ուրիշներն այս աշխարհումն քո եւևիյդ դեռ դառն արտասուք թափում կլինին։

Մէնթ անմա՜հ ընթ։ Մեղաւո՛ր մարդ, ինչո՞ւ է երեսիդ գոյնը թռչում։ Իմացիր, որ անմահ է թշուառի հոգին էլ, որին որ դու հալածումէիր քո ատելութիւնովդ, քո չար լեզուովդ. անմահ է աղքատն էլ, որին դու քո քարասրտութիւնովդ օգնել չէիր ուզում ու գլխիդ հեռացնում էիր, ինչ է որ դու փափուկ կեանք անց կացնես, վայելչութիւններ քաշելով. անմահ է այն հոգին էլ, որին որ դու գլխից հանեցիր, խաբեցիր ու կեանքը սևացրիր. անմահ է նա էլ, որին որ դու, անբարտաւանն մարդ, մի որդնի նման ոտքիդ տակը ճխլում էիր։

Մէնթ անմա՜հ ընթ։ Դու էլ, ով ճշմարիտ աշակերտ Քրիստոսի, իմացիր, որ նորանք էլ են հոգւով անմահ, որոնց որ դու բարիք արիր։ Նորանք քեզ համար վկայութիւն կտան Առուածոյ առաջ։ Ա՛յն արտասուքն, որ դու սրբեցիր նեղութիւններ քաշողների աչքից, քեզ համար երջանկութեան պատճառ կդառնան։ Ա՛յն երեխաները, որոնց որ դու բարեպաշտ հոգւով կրթելով, մեծացրիր յաւիտենական կեանքի համար, նորանք քո

ձեռքիդ երբէք չեն խլուիլ: Նորանք քեզ ամենից մօտիկ աղգական հոգիներն են այս ու այն աշխարհում:

Մէնթ անմահ էնթ: Ո՛վ Աստուած, ով իմ Աստուած, որ անչափ ողորմած ես, խնամատուն և արգարագատ. այս իմ ունեցած յոյսիս մէջն է իմ երկրաւոր կեանքիս բոլոր քաղցրութիւնը: Քո ստեղծած աշխարհիդ մէջ մահ չկայ, այլ կեանք միայն. և ինչ որ մենք մահ ենք անուամ, մի այլափոխութիւն է միայն: Քո ստեղծած բոլոր աշխարհը կեանք է. Դու ինքդ կեանք ես ու կենդանութիւն. ի՞նչպէս կարելի է, որ ես Քո մէջդ բնակուեմ ու իմ կեանքս դադարի: Դու ինձ նորա համար չես այս աշխարհքիս վերայ ստեղծել ու ինձ կեանք տուել, որ ես մի երազի նման անց կացնեմ կեանքս ու ամեն բան վերջանայ, մի ժամանակ աշխարհիս վերայ ապրած լինիմ, ու յետոյ՝ չեղածների հաշուում համարուիմ: — Դու ինձ համար յաւիտենական կեանք ես ընտրել: Յարութիւն առած իմ փրկիչը, Յիսուս Քրիստոս, իւր մեզ տուած ուսումովը, մեզ ցոյց է տալիս այն ճանապարհն, որ դէպի յաւիտենական կեանքն է գնում:

Նա իմ հոգուս անմահութիւնովն ինձ ցոյց է տալիս այդ ճանապարհն, որ դէպի Քրիստ է գալիս, — որ Քրիստ մօտ է բերում. դէպի այն բարձր կատարելութիւնները, որոնց հասնելու Դու ինձ նշանակել ես, և որոնց համար պիտի նախապատրաստուիմ երկրաւոր կեանքիս փորձութեան վարժատան մէջ:

Որպիսի անպատմելի ցնծութիւնով է լցվում հոգիս. որպիսի հանգստութիւն, որպիսի անվրդով խաղաղութիւն է բերում սրտիս յաւիտենական կեանք վայելելու մտածմունքս: Կեանքիս մէջ տեսած ցաւեր ու նեղութիւններ, իմ քաշած սև օրեր, իմ անցկացրած տխուր ժամեր, ի՞նչ է՛ք որ դուք իմ աչքումս իմ ապագայ երջանիկ կեանքիս առաջին: Այն ստուերն է՛ք, որ շուտ անց է կենում, գնում, ու իմ մէջ մի հետք չէ թողնում. Աստուածոյ այն դրդումներն է՛ք, որ խրատում էք ինձ պահել Քրիստոսի մեզ ցոյց տուած սուրբ ճանապարհներն. իմ երկնաւոր Հօր այն դրդումներն է՛ք, որ յիշեցնում է՛ք ինձ յաւիտենական կեանք ունենալու կոչումն:

Ո՛վ իմ Աստուած, Քեզ պինդ կկպչեմ, Քեզ կյարեմ բոլոր ոյժիս: Քո կամքովդ ես անմահ եմ. Քո սուրբ Հոգուդ աղդեցութիւնովը մինչև որտիս խորքը՝ այնպէս կապրեմ այս անցաւոր աշ-

խարհուրդն, որ անանց աշխարհում արժանի լինիմ յաւիտենական կեանք վայելելու։ Իմ սխալմունքներս դէն կ'ջնեմ ինձանից, վրաս մի արար քցող ցեխի կտորի նման։ Ես Աստուծունը կ'լինիմ, որովհետև անմահ եմ։ Փափագում եմ ու սրտանց տշխատում եմ Քեզ մօտ գալու, յաւիտենական Հայր։ ընդունիր Քո վտռքիդ մէջն ինձ ու նորանոց, որոնք որ իմն են։

Թ՝ոլգ՛. գէորգեանէդէնէց *) Գրիգոր Եպիսկոպոս Աղաւիրեանց։

ԱԹՈՌ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ։

(Շարունակութիւն, Ե էջէ։)

ՓԳ։

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԱՍՏԻՃԱՆՔ։

Եկեղեցական նուիրապետութեան աստիճանները թէպէտ տարբեր հեղինակներէ տարբեր կերպով բաշխուած են, սակայն բոլոր տարբեր բաժանմունք յայդմ միայն համամիտ են որ վարդապետաց բնաւ տեղ չեն շնորհեր եկեղեցական նուիրապետութեան կամ դասակարգութեան մէջ։ Վարդապետութեան աստիճանը բնաւ մի եկեղեցւոյ մէջ չունի այն փայլը և պատիւը զոր ստացած է Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ, և գուցէ այդ պատճառով աւելի և այս մեր մէջ ստորնացած է նա այդ անունը և աստիճանը կրողներէն։ Վարդապետութիւնն ըստ իւր բնութեան քահանայական կարգին ստորնագոյն և գերագոյն աստիճաններէն չէ, այլ միայն արուեստութիւն մի է զոր կատարեան եկեղեցականք ի շնորհս եկեղեցական ուսմանց, և ի շնորհս այդ արուեստութեան իշխանութիւն կունենան ուսուցանել յեկեղեցւոջ և արտաքոյ եկեղեցւոյ պաշտօնապէս, հրահանգել և խրատել ժողովուրդը, կրթել և դաստիարակել ուխտի մանկունքը, պաշտպանել եկեղեցին հակառակորդաց և թշնամեաց գէմ, տարածել ուղիղ վարդապետութիւնը բանիւ և գրով,

---

Վրիպակ. Ապրիլ ամսոյ ԱՊԵՐԱԽՕՏՈՒԹԻՒՆ յօդուածն ևս Թարգմանութիւն է գերմաներէնից և ոչ թէ գաղղիարէնից։

և պայծառացնել Ս. Գրոց ընթերցումը և տարածումը օրինաւոր մեկնաբանութիւններով։

Այդ նուիրական պաշտօնը, թէպէտ անոր էութիւնը ուսման և կարողութեան վրայ հիմնուած է, սակայն չորութիւր պարզ աշխարհականաց, զի քանի որ եկեղեցւոյ պաշտօն է, եկեղեցականն անձանց վայել է, և եթէ եկեղեցւոյ արտաքին ծառայութիւնք ալ, զորօրինակ դռնապանութիւն և ջահընկալութիւն, եկեղեցական անտիճաններ են, որչափ և առաւել բանին կենաց քարոզութիւնը։ Նմանապէս եկեղեցական կանոնաց համաձայն է որ այդ պաշտօն տրուի օրհնութեամբ և աղօթիւք և ծիսական կարգօք, և ի մեզ կարի իսկ վաղաւար և ընդարձակ ծէս սահմանուած կայ վարդապետական ուսուցութեան համար։ Իսկ վարդապետութեան աստիճանները ի մեզ երկուք են, Մաննաւոր գաւազան և Ծայրագոյն գաւազան, և թէպէտ առաջինը չորս աստիճան ունի և երկրորդը՝ տասն աստիճան, ընդ ամենն չորեքտասան աստիճան, սակայն երբեք այդ բազմաթիւ աստիճանները բաժանաբար գործածուած չեն, և ոչ առանձին անուն կամ պատիւ կամ պաշտօն չեն ներկայեր, այլ կը մնան միայն իբր լոկ արուեստական բաժանումն առանց գործադրութեան արդեանց։

Իսկ Մաննաւոր և Ծայրագոյն գաւազանաց տարբերութիւնը շատ մեծ է։ Մաննաւոր վարդապետը տակաւին աշխարհական դիրք ունի որ ընդ հրամանաւ միայն կարող է գործել, մեծ վարդապետի հրահանգով և եպիսկոպոսի արտօնութեամբ։ Իսկ Ծայրագոյն վարդապետը անկոպար է գրեթէ իւր արտօնութեանց մէջ, նա ամենուրեք կարող է աթոռ կանգնել և ուսուցանել առանց հարկ ունենալու եպիսկոպոսական արտօնութեան, և այդ պատճառով է որ օտարք այնպէս գաստակ են թէ Հայոց մէջ վարդապետութիւնը եպիսկոպոսութենէ գերագոյն աստիճան է, և Հայք ալ այդ գաղափարէն օտար չեն եղած երբ տակէ մինչև դար մը յառաջ եպիսկոպոսք իսկ վարդապետ անունը կը գործածէին իբր առաւել պատուաւոր, զի շատ եպիսկոպոսունք, արքեպիսկոպոսունք և պատրիարքունք ընդհանրապէս վարդապետ պատուանունով կոչուած կան յիշատակարաններու և կնիքներու մէջ։

Վարդապետութեան վրայ խօսելով շատ մանաւոր իմով իր-

ներ կարող էինք պարզաբանել, և քննել, և եկեղեցական աւանդութեամբ բացատրել, օրինակ իմն թէ 1. վեղարն վարդապետական աստիճանին է սեփհական թէ կուսակրօն քահանայութեան, թէ առհասարակ բովանդակ եկեղեցականութեան, 2. թէ վարդապետութեան աստիճան, այսինքն ուսուցանողական արտօնութիւնն ստանալու համար էականն է կուսակրօն եկեղեցականութիւնն, 3. թէ քահանայից ոմանց որոշած մագիստրոսութեան պատուոյ աստիճանը արդեօք նոյն ինքն վարդապետական աստիճանը չէ, միայն հայ և լատին բառերու տարբերութեամբ զանազանեալ. 4. թէ հնար է արդեօք վարդապետութեան չորեքտասան աստիճանները ուրիշ կերպերով ալ բաշխել, որ երկուքէ աւելի վարդապետաց տեսակներ լինին արդեամբ: 5. Թէ վարդապետաց գործածած երկդիմեան և չորեքգլխեան օձաղարդ գաւազանները արդեօք Մաճառոր և Վայրագոյն գաւազաններու տարբերութիւն են թէ պարզ կամայական զարդ մը, 6. թէ եպիսկոպոսական աստիճան ընդունելու համար էական է արդեօք քահանայական ձեռնադրութենէ յետոյ մանաւոր և Վայրագոյն վարդապետութեան գաւազանները ընդունած լինել. 7. թէ սարկաւագութեան աստիճան կամ ստորնագոյն աստիճան ունեցողներուն հնար է արդեօք վարդապետութեան պաշտօն կամ աստիճան տալ, Ա.յդ տեսակ ուրիշ շատ խնդիրներ մարթ էր յուզել, սակայն առ այժմ մոռնալիր չեմք զբաղիլ անոնցմով, զի անմիջական և գործնական օգուտ չեմք սպասեր անոնց լուծմանէն:

Միայն կը բաղձայինք որ վարդապետական աստիճանին էութիւնը կազմող ուսումնական արդիւնքը, որ բոլորովին ի մոռացօնս ինկած է, վերստին ի զօրութիւն կոչուէր և վարդապետական աստիճանք, այսինքն, թէ Մաճառոր և թէ Վայրագոյն գաւազաններ, չսեպուհին իբր իրաւունք ժառանգական կուսակրօն քահանայութեան, այլ սեպհական իրաւունք ուսումնական արդեանց:

Հաւատարիմ մնալով եկեղեցւոյ հոգւոյն, հարկ չեմք սեպեր ուսուցանողական պաշտօնը հովուական պաշտօնին հետ այնպէս խառնել որ շփոթ մի պաշտօն ելնէ, և վարդապետն և եպիսկոպոսն չզանազանուին իրարմէ: Եթէ մի էին, ապա տարբեր արարողութեամբ և պայմանով չէին տրուիր, և եթէ տար-

քեր կը տրուին, ապա և տարբեր գործ և արդիւնք պիտի ցուցնեն և պիտի պահեն։

Եաւ լիցի ի մէնջ եկեղեցւոյս մէջ նորոգութիւններ մուծանել, մանաւանդ թէ վարդապետութեան մեծ պատիւը պաշտպանելով Հայաստանեայց եկեղեցւոյ յատուկ սի կէտը կը շօշափեմք. զի մերս եկեղեցի՝ ուրիշ եկեղեցեաց համար պարզ դրպրոցական և ուսումնական ըմբռնուած աստիճանը եկեղեցական և նուիրական պատուոյ վերածեց, և այդ բարձր աստիճանի վերածելովն առաւել ևս նախանձախնդրութիւն և ընտրութեանց խստութիւն պահանջեց։

Մեք առաջին ենք պահանջող որ վարդապետք եպիսկոպոսութեան դեր չստանձնեն և առանց ձեռնադրութեան իբր եպիսկոպոս չճոխանան և եպիսկոպոսական պաշտօն ու պատուհ չստանձնեն, և նոյն հոգւով կը բաղձամք որ վարդապետք ալ կոչուին և յառաջանան գործութեամբ այն արդեանց միայն՝ որ իրենց աստիճանին էութիւնն ու խկութիւնն է, այսինքն է նուիրական և սրբազան ուսմանց և Սուրբ Գրոց հմտութեանց և աստուածաբանական գիտութեանց մէջ զարգացում և արժանիք։

Այլ թէ ո՞րն է և ո՞րն պարտ է լինել վարդապետաց գործունէութեան ասպարէզը, յայտնի է ըստ ինքեան, քահանայական պաշտօնավարութենէ ընդարձակագոյն գործ ունին և հովուական պաշտօնավարութենէ տարբեր, իրենց պահուած է հովուաց եկեղեցւոյ աջակից լինել, քաղաքաց և գիւղօրէից մէջ քարոզել, վիճակներու բաժանմանց մէջ քորեպիսկոպոսական պաշտօն վարել, ժողովոց և խորհրդոց մէջ աշխատել, վանօրէից զարգացման համար քրտնել և զանձինս զարգացնելով ալ հովուական աստիճանին արժանանալ։

Վարդապետական աստիճանէ յետոյ հարկ էր քահանայական աստիճանին վրայ ալ խօսիլ, սակայն գործոյս առաջին գլխէն աղդարարեցինք թէ զանց պիտի ընեմք սոյն աստիճանին վրայ խօսել, քանի որ նպատակն միայն Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ աթոռոյն վրայ խօսիլ և եկեղեցական իշխանաւորութեան վերաբերեալ խնդիրները քննել է։ Վասն այսորիկ այս տեղ ալ չեմք մտներ քահանայական աստիճանին վրայ խօսիլ, մանաւանդ որ քահանայութեան և քահանայից վերաբերեալ խըն-

դիրները շատ ընդարձակ գրութեանց կը տանին զմեզ, զորս թերևս ուրիշ առթով մը պատեհ ունենանք բացատրելու։

ԻԹ.

ԵԶԲԱԿՑԱՑՈՒԹԻՒՆ.

Դառնանք ուրեմն եկեղեցական նուիրապետութեան գլխաւոր աստիճանին, որ է կաթողիկոսական աստիճանը։ Ոտար եկեղեցիք եպիսկոպոսական աստիճանէ վեր կարգ չեն ճանաչեր, և ձեռնադրութեամբ տրուած գերագոյն աստիճանն իրենց մէջ եպիսկոպոսութիւնն է. իսկ ինչ որ եպիսկոպոսութենէ վեր է, պաշտօնավարական աստիճան է անուանմամբ ստացեալ, և ոչ կարգի աստիճան՝ ձեռնադրութեամբ ստացեալ։ Մետրապոլիտութիւնը, արքեպիսկոպոսութիւնը, պրիմասութիւնը, էքսարքոսութիւնը, պատրիարքութիւնը, Կոստանդնուպոլսոյ տիեզերական պատրիարքութիւնը և Հռովմայ պապութիւնը ձեռնադրութեան կանոն չունին, միայն մերս Հայաստանեայց եկեղեցւոյ կաթողիկոսութիւնն է, որ խորհրդական ձեռնադրութեամբ և միւռոնի օծմամբ կը տրուի, որով և նուիրեալն յայդ աստիճան՝ կատանայ առաւել քան զհասարակ եպիսկոպոսունս։ Այդ պայմանին զօրութեամբ Հայոց Հայրապետն է միայն որ կարող է անուանիլ ՕԾԵԱԼ ՀԱՅՐԱՊԵՏ, մինչ այլոյ եկեղեցեաց Հայրապետք հակառակ իրենց բարձր անուանց և կարծեցեալ տիեզերական իշխանութեանց, առաջի եկեղեցւոյ և խորհրդական տեսութեամբ հասարակ եպիսկոպոսէ աւելի չեն։ Եւ յիրաւի զարմանալի է որ մինչ այլոյ եկեղեցեաց Հայրապետք կը ջանան Հայոց Հայրապետին աստիճանը նուաստացնել և գրեթէ նորա Հայրապետական աստիճանն իսկ ուրանալ, իսկապէս իրենք նուազագոյն են քրիստոնէութեան օրինական պայմանով, զի չունին Հայրապետական օծումը։

Հայաստանեայցս Ս. Եկեղեցի իւր սեփհական կանոններով եկեղեցական դասակարգութեան ամենախիստ պահապանն եղած և եկեղեցական նուիրապետութեան բարձրագոյն նշանակութիւն տուած լինելով մէկտեղ, տարաբաղդ ժամանակաց ազդեցութեան ներքև պարտաւորուած է տեսնել այժմ յինքեան ինչ ինչ պարագայներ որք ճշդիւ չեն կերպարաներ Հնոյն

պատկերը, այլ կը կրեն դժպհի պատահարաց գործած աւերածը։ Սակայն օրհնեալ է Աստուած, ղի ժամանակ ոկսան թողուլ իրենց խրթնացեալ կերպարանը և շնորհիւ գիտութեանց, ընդ որով Հայաստանեայցս եկեղեցւոյ զաւակք սփռեալ են, կարող եմք այժմ լիապէս գործադրել ինչ որ ճշմարտապէս և և իրապէս մերս եկեղեցւոյ կանոնադրութիւնն է։

Ջաւ ի մէնջ բարեկարգութիւն պահանջել այն խմաստով որ օտար եկեղեցեաց նմանողութեան յորդորէ զմեզ։ Քրիստոսեան եկեղեցեաց ամեն ճիւղերէն աւելի Հայաստանեայցս Ս. եկեղեցի անսխեղծ և անաղարտ կըպահէ նախկին դարուց հաւատքը, նախկին դարուց դաւանութիւնը, նախկին դարուց կազմութիւնը, նախկին դարուց հիմնական կանոնները։ Ուրիշ եկեղեցիք որք քան զմեզ բազմագոյն են և հզօրագոյն, և արտաքին փայլմամբ պայծառագոյն, դարուց ի դարս փոփոխմամբ բարգեցին, դիզեցին, յաւելին նորութեանց ստուար թիւ մը թէ իրենց հաւատոց և թէ իրենց կանոնաց մէջ, և նոր կերպարան տուին հնոյն, և կարծելով լուսաբանել ինչ որ կարն, փոփոխեցին ինչ որ էրն։ Այդպիսի դիզեալ նորութիւնք, մանաւանդ Հռովմէական եկեղեցւոյ, մղեցին նոյն եկեղեցւոյ մի մասը՝ նորութիւնները մերժելու և սոքա նորութեանց դէմ բողոքելով և բարեկարգութեանց հետևելով, այնչափ յաւաչեցին զի աւանդութիւնը մոռացան և անհատական դատողութեամբ սկսան կանոններ շինել, մեկնութիւններ տալ և աստուածաշունչ պատգամները խեղաթիւրել։

Իսկ Հայաստանեայցս Ս. եկեղեցի ոչ նորութեանց ետև մոլորեցաւ և ոչ բարեկարգութեանց պէտք ունեցաւ, այլ իւր հաւատոց պարզութեամբ և հնաւանդ դաւանութեանց և կանոնադրութեանց պահպանութեամբ բոլոր եկեղեցեաց վրայ գերազանցապէս փայլեցաւ և կը փայլի միշտ։

Ինչ որ մերս եկեղեցւոյ կարգաց նկատմամբ թէ ներքինք և թէ արտաքինք կը մեղադրեն, կրնան ամիոփուիլ յայս հակիրճ բան։ Երկարատև դժուարին ժամանակք և դժպհի պարագայք և դժնեայ արկածք եկեղեցւոյս դերազոյն աթոռը թափառելոյ պարտաւորեցին, եկեղեցւոյս պաշտօնեայները պաշտօնավարութեան անհնարութեան մատնեցին, եկեղեցւոյս հաւատացեալները վայրավատին ցրուեցին, եկեղեցւոյս տաճարները

գետնափորներու մէջ ապաւինել ստիպեցին, եկեղեցւոյս վառաւոր կարգերը ու պաշտամունքը լուել բռնադատեցին։ Այդ ամենայն արգելք և խափանածք երկար ժամանակեայ տևողութեամբ սովորութեան ոյժ ստանալու հասան, և խրիմնացան սակաւուք մեր եկեղեցական կարգաւորութիւնք, թուլացան մեր նուիրապետական դասակարգութիւնք, խորթացան մեր հաւատացեալ ժողովուրդք։ Այդչափ է և ոչ աւելի Հայաստանեայցս եկեղեցւոյ նկատմամբ հնար եղած ուղղամիտ մեղադրանքն։

Այլ զորօրինակ տևողական սառնամանեաց ներքև ճաճկեալ բողբոջք նոր ճառագայթներով և նոր ղեփիւռով կը վերակենդանանան ինքնին, այդպէս և մերս եկեղեցւոյ դժպհի ժամանակք կը փարատին դիզադէզ տառապանաց հալելով, և ամենուրեք Հայաստանեայցս եկեղեցի նորաբողբոջ կը զարդարի։ Մեր աւանդութիւնք, մեր նախկին կանոնք, մեր հին սովորութիւնք, մեր արդարացի իրաւունք, մեր արտօնութիւնք ու մեծութիւնք ինքնին կուգան ի յայտ, և նոքին բաւական են կենդանանալ իբրև զփիւնիկ հրաշալի որ իւր իսկ աճիւնէն կեանս կստանայ։

Դժպհի ժամանակաց դժպհի հետևանաց ծանրագոյնը կրնկատեմք մեր նուիրապետութեան և քահանայապետական դասակարգութեան թուլանալը, մեծի կաթողիկոսութեան գերագոյն աթոռոյն ազդեցութեան նուազելը, երկրորդական աթոռոց այսինքն մանաւոր կաթուղիկոսութեանց և փոքր պատրիարքութեանց տարապայման աճելը, մեարապօլտական դրութեան գլխէն խափանուիլը, եպիսկոպոսական աստիճանին նուազելով տկարանալը, վարդապետական կոչման տարօրինակ դիրք մը ստանալը, քահանայական աստիճանին իւր նուիրական պատուէն զրկուիլը, սարկաւագաց աստիճանին գլխէն մռայլուիլը, և գպրաց դասուն բոլորովին իսկ աշխարհիկ դասուն հետ շփոթուիլը։ Այս ամենայն, զոր խոստովանիլ ամօթ չէ, զի անհնարին և բուռն ժամանակաց տևողութեամբ բոլորովին իսկ բնաջինջ չլինելնիս մեր մեծ պարծանքն է, այս ամենայն կըսեմք կըպահանջէ ի մէնջ որպէս զի ուշերնիս և ոյժերնիս դարձնեմք բոլոր Հայաստանեայցս Ս. եկեղեցւոյ նուիրապետական դասակարգութիւնը ամրապնդելու և ամ-

բողջացնելու և վնասելը կարկատելու և խրթնացեալը փայլեցնելու։

Հայաստանեայցս Ս. Եկեղեցւոյ Գերագոյն աթոռը ոչ երբէք այնչափ փառաւոր կերևի, քան երբ իր բարձրաբերեան եղնելու բազմաթիւ սանդուխները կարգ ըստ կարգէ շարադասեալ և համաձևեալ նկատուին։

Հայաստանեայցս աթոռ, որ առաքելական հաստատութեամբ ամրացեալ և առաքելական արեամբ ոռոգեալ և առաքելական վարդապետութեամբ զօրացեալ, հիմնարկեցաւ նախ յառաջին Լուսաւորչացն մերոյ ի սրբոյ առաքելոցն Թադէոսէ և Բարթողիմէոսէ, և որ յետոյ ինքնին արտափայլեալ նորոգեցաւ յերկրորդ Լուսաւորչէն մերմէ ի Սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ, և որ յարաժամ ի գերագոյն հայրապետաց աթոռակալաց Լուսաւորչահիմն Գահուն խնամեալ պահեցաւ և սիրեցաւ, Հայաստանեայցս աթոռ՝ զոր անկախ և ինքնագլուխ տեսաք և յայտնեցաք, և օտարին հովանաւորութեան անկարօտ ցուցաք, նա կարող է Տերամբ յառաջել յսկսեալ ճանապարհին նորափետուր պայծառութեան, և մեզմէնք ի Տեառնէ խոնարհ հայցուածով և եկեղեցասէր սրտիւ, զի տայցէ Աստուածարեալ և Երանաշնորհ նորընտիր Հայրապետիս Տեառն Տեառն Մակարայ Առաջնոյ Մեծի Կաթողիկոսի ամենայն Հայոց հասանել ի գլուխս աստուածահաճոյ գործոյս, և զի Սա ինքն զքահանայապետականն և զքահանայականն դասակարգութիւն Եկեղեցւոյս Հայաստանեայց նորոգեսցէ, լուսաւորեսցէ, ամրապնդեսցէ, զօրացուսցէ, պայծառացուսցէ ի փառս միոյ միայնոյ Կենդանի Գլխոյ եկեղեցւոյս Սրբոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ է օրհնեալ ի յաւիտեանս և ևս։

Մաղաքիա Եպիսկոպոս։

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՅԱԲՈՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՂԲԱՏԱՅ.

(Շարունակ. Ազբար, Բ. Դ.).

ՑՕԴՈՒԱԾ ԺԱ.

1) ԱՆԱՊԱՏՆ ԿՈՒՍԱՆԱՑ.

Մղոնաչափ հեռաւորութեամբ ի վանայ ի կողմն արևելից ի վեր քան զգերեզմանատուն հասարակաց առ ստորոտով լերինն Տէրունականի գոյ փոքրիկ եկեղեցի գմբեթազարդ համակ կերտեալ ի սրբատաշ քարանց, նորոգեալ ի ձեռն Զալի և կնոջ իւրոյ վ.առվառի ի թուին Հայոց ՌՃԻԵ (1676) ի պէտս կուսանաց, որք ճգնեալ են ի սմին անապատի, վանորոյ և կոչի եկեղեցիս այս Անապատ կուսանացն Հաղբատայ: Ի մէջ կիսաքանդ պարսպի անապատիս երևին քարուքանդ որմունք սենեկաց յարևելից կուսէ, նաև խաղովակք ստորեկրեայք, որովք բերեալ են ղջուր աղբերն Բանովշի ցաղտանց փոսէ ի պէտս կուսակրօնից. այլ այժմ է աւերակ, միայն ականատեղին ցարդ ևս յայտնի երևի: Ցանապատէ աստի գեղեցիկ իմն պատկերանան զառաջեաւ հրաշակերտ վանօրայքն Հաղբատայ և Սանահնի և բոլոր ղուարճահայեաց դրուխիւնք գիւղօրէից տեղւոյս:

Արձանագրութիւն նորոգողի եկեղեցւոյ ի ճակատ վիմաքարի դրան: «Ի թուին ՌՃԻԵ. (1676) բարեպաշտ ազատ յազգայ Եկուլեանց մեծահաւատ Զալն՝ որդի Շահ-Ղուլունի՝ ողորմած ամուսնաւ իւրով վերստին նորոգեաց զտաճար Տիրամօրն»: Այլ արձանագրութիւն երկրորդ նորոգողի «Թուին ՌՃԼ. (1681) այս է տապան Սարգիս վարդապետին՝ ազգաւ Խոցիկեցի և նորոգող սուրբ եկեղեցւոյս»:

Առ դրան եկեղեցւոյն ի հարաւակողմն են շիրիմք երևելի արքեպիսկոպոսացն Հաղբատայ Տ. Յովհաննու, Համազասպայ և Գէորգայ՝ առ որ գրեաց Շնորհալին Թուղթս այսու խորագրութեամբ «Թուղթ ի Ներսիսէ եպիսկոպոսէ . . . պատասխանի Թղթոյն Գէորգեայ արևելեան եպիսկոպոսի առաջնորդի սրբոյ

ուխտին Հայբատայ և էառ զպս տս վ՚անխս»։ Կամ գնեալ կան երեք հսկայաձև քարեայ խաչք ի վերայ շքեղազարդ դամբարանաց ունելով զայս օրինակ տապանագիր։ «Ա.յս է Հանգիստ Տեառն Յովհաննիսի»։ «Ա.յս է Հանգիստ Տեառն Գէորգայ»։ Երրորդ տապանաքարն թէպէտ չունի զարձանագրութիւն, այլ աւանդութեամբ ասեն թէ՝ է շիրիմ տեառն Համազասպայ առաջնորդին Հայբատայ։ Հանդէպ սոցա յարևմտեան վայրի են գերեզմանք Իգնատիոս և Սահակիանոս վարդապետացն, որք գտան ի ժողովին Լօռւոյ յաւուրս Ամր Սպասալարին Զաքարիայ, որ վասն առնելոյ զպատարագն վրանաւ։ ի վերայ շիրմի Տեառն Սահակիանոսի վորագրեալ է այսօրինակ «Արձանս այս վսեմական՝ է Սովսեստոսի Տէր Սահակիանոսի, կազմեալ ի տէր Յովհաննիսէ քուեր որդւոյ Իւրոյ ի թիւս ՈՀԳ (1125) յաղաւթս յիշեցէք վասն Տեառն»։ Իսկ գերեզմանն Իգնատիոս վարդապետի չունի արձանագրութիւն։ Նորոգօղք Անապատ եկեղեցւոյս երևին յարձանագրութեանց։ Բայց նախկին շինութիւն սորա համարի յառաջ քան զմեռսանելորդ դարն Քրիստոսի։

Յանապատէ աստի յարևելս կոյս Յաղտանց փոս կոչեցեալ ձորն ի վեր գնացեալ ելանես ի կատար բարձր լերին Տէրունականի, ուրանօր ի միում տափարակ տեղւոջ կառուցեալ կայ ի հարթ և ի սրբատաշ քարանց մատուռ մի կոչեցեալ յանուն Տէրունական, յորում կանգնեալ կայ գեղեցկաշէն խաչաքար, այլ ծածք այսր մատռան իսպառ խախտեալ կան ի հնութենէ ժամանակին։ Միաբանք Հայբատայ վկայեն, թէ այն է տեղի ճգնաւորաց և բազում նշանք հրաշից տեսանին ի տեղւոջ անդր։ ուստի և բազումք ի ժողովրդականաց խնկօք և պատարագօք գան ի համբոյր որպէս Տէրունականին, նոյնպէս և խախտեալ մատռանն՝ որ ի գլուխ Սուրբ-Լոյս լերին։ Առ դրան իւրաքանչիւր երկուց աւերակ մատռացն երևին մի մի գերեզմանք մինչև ցարդ անյայտ՝ թէ որք են արդեօք այն փոշիացեալ ոսկերք ի կատարս լերինն Տէրունականի և Սուրբ-Լուսոյ։

2) ՍՈՒՐԲ ՋՕՐԱՎՈՐՔ.

Ի ներքոյ պարսպի վանացս ի հարաւ մերձ ի Սեղիկ գետակն ի վերայ արձակ տեղւոջ կառուցեալ կայ ի Բարսեղ քահանայէ

ի թ. ՉԻՀ. (1279) հարի քարամբ քանդեր սրահիւք հին եկեղեցի յանուն սուրբ Զօրավարք ըստ այժմեան կոչման սուրբ Գէորգայ զօրավարին։ Կէտն հարաւային որմոյ ի վերայ սեղանոյ կամարին խախտեալ կործանեցաւ ի 1827 ամի ի. սաստիկ երկրաշարժութենէն։ Ի վերայ սեմոյ դրան այսր եկեղեցւոյ վրագրեալ է այս արձանագրութիւն.

«Կամաւ նախախնամողին Աստուծոյ և յառաջնորդութեան Տէր Յովհաննէսի ի թուին Հայոց ՉԻՀ. ես Բարսեղ քահանայ կանգնեցի զսուրբ զաւրավարքս, և շինեցի զխորանս լուսոյ յանուն սրբոցս մեծաւ ջանիւ, և քրտնամուխ անձամբ իմով՝ ի վրկութիւն հոգւոյ իմոյ, և յիշատակ մեղ և ծնողաց մերոց և սնուցողացն»։ . . . ։ Մերձ ի հարաւային որմն այսր եկեղեցւոյ գտանին քանի մի գերեզմանք հանդերձ ստուար և սրբատաշ տապանաքարիւք առանց արձանագրութեանց։ Ի վերայ շիրմացս այսոցիկ կանգնեալ կան երեք խաչաքարք, երկուսն մեծ, իսկ միւսն փոքր։ Շուրջ զեկեղեցեաւս կան տեղիք պարտիզաց վանաց և գիւղականաց, յորս յարդ և գտանին քանի մի պըտղաբեր ծառք։

ՑՕԴՈՒԱԾ ԺԶ.

1) ՉԳՐԱՇԷՆ ԵԿԵՂԵՑԻ.

Արտաքոյ պարսպի վանացս հանդիպ սուրբ Գրիգոր եկեղեցեայն ի հարաւակողմն գտանի ի գիւղն անդ սագաշէն քարակերտ եկեղեցի յանուն Աստուածամօր, որ այժմ կոչի Զգաւշէն. շինեալ ի ՈԽԴ թուականին Հայոց (1195)։ Գեղեցիկ են բոլոր շինուածն և քանդակագործութիւնն արևմտեան դրանն այսր օրօրոցաձև եկեղեցւոյ, յորոյ վերայ տեսանին հրաշակերտ խաչաքարք, ի ստորոտս որոց յաջ և յահեակ շուրջանակի առ սեմօք դրանն քանդակեալ են պատկերք աղաւնեաց և ծաղկեալ ոստք ծառոց նռնենեաց. ի վեր քան զլուսամուտն երևի կատր ճերմակ քարի յորոյ վերայ եղեալ է արձանագրութիւն. բայց այժմ քարն այն բոլորովին փշրեալ է։ Ի վեր քան զայս՝ գեղեցիկ ճարտարութեամբ քանդակեալ է ի վերայ միակաւոր քարի պատկեր հոգւոյն որոյ իբրև զաղաւնի թռուցեալ վերուստ ի վայր։ Ի ճակատ գռնաքարին փորագրեալ է այս ար-

ձանագրութիւն։ «Ի ՈԽԴ թուականիս (1195) ես Սելամայ նուաստ ազախին Քրիստոսի վերստին շինեցի զսուրբ Աստուածածինն՝ որ խափտեալ էր ի հիմանց վասն մեր հայրենի գերեզմանացս. և ինձ ետուն երկու պատարագ զԱւետեաց Աստուածածնին և Մինասայ աւրն. ի կենդանութեան իմում՝ Դաւթի. և յետ իմ մահուան՝ ինձ. ով խաւիանէ՝ Յուգայի կցորդ է և մեր խղճիս Տէր։ ամէն»։

Առ դրան եկեղեցւոյս են երկոտասան գերեզմանաքարք առանց արձանագրութեանց, ի վերայ երկուց շիրմաց միայն և եթէ վորագրեալ կան «Դաւիթ» և Հասան»։

2) ՍՈՒՐԲ ԿԻՒՐԱԿԷ.

Յարևմուտս - Հարաւոյ գեղջն ի լանջս հոլաբլրոյ առ ճանապարհաւն Ջղայաձորոյ գոյ հին փոքրիկ մատուռ շինեալ յորձատաշ քարանց յանուն սուրբ Աստուածածնի, որ այժմ կոչի Սուրբ Կիւրակէ. ունելով ի միջի զփոքրիկ բեմ հանդերձ փոքր խաչիւ. ի սրահի այսր մատռան ի վերայ միոյ ատուար պատուանդանի կայ ընդ որմին ի հարաւակողմն քարձր ի վեր կանգնի յարդ գեղեցիկ քարեայ խաչ ի վերայ շիրմացն, որք ամիոփեալ ունին աստ զոսկերս նախնի աւագայ մերոց։ Արձանագիր այսր խաչի է այսպէս «Յանուն Աստուծոյ ես անպիտանս Սարգիս կանգնեցի ի հիմանց զատճառ սրբոյ Աստուածածնիս. արդ աղաչեմ՝ զընթերցողսդ, և զամենեսեան՝ որ երկրպագիցէք սրբոյ Աստուածածնիս յիշեցէք յաղաւթս ձեր զծնողան իմ՝ և զիս զվերոգրեալսդ անուն. և Աստուած զձեզ յիշեսցէ. ամէն ՈԼԷ թուին (1188)»։ Շուրջ զեկեղեցւաս է գերեզմանատունն հասարակաց, յորում եղեալ են խաչաքարք, բայց ի ձեռն ոսոխաց խաչին Քրիստոսի անհետացեալ են. մի միայն պատուանդանքն տեսանին այսօր։

3) ԱՌԱՋԱԴԷՄ ԵԿԵՂԵՑԻ.

Առ եզր գեղջն Հաղբատայ ի հիւսիսակողմն գոյ աժմ խախտեալ հնաշէն եկեղեցի յանուն «ա-ջբ Սիոն», զորմէ ասեն առաջինն է սա քան զամենայն շինուածս Հաղբատայ, որպէս զնահատիայ աւանգուրթեամբ պատմեն, թէ ի Սանահին ի վաղուց անտի կայր շինեալ եկեղեցի, որոյ նախկին հիմնարկութիւն

եղեալ է ի ձեռն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, նմանապէս շինութիւն այլ հին եկեղեցւոյ գնեն ի ժամանակս հնոյ հիմնարկութեան Սանահնի եկեղեցւոյն. հուսկ ապա ի ժամանակս թագաւորութեան Աշոտոյ Ողորմածի ընտրեալ են մերձ սորա զբարձրաւանդակ տեղին վասն շինութեան վանիցն Հաղբատայ: Մինչև ցարդ զանուն խախտեալ հնաշէն եկեղեցւոյս կոչեն ընակիչքն «Առաջադէմ եկեղեցի» այսինքն զառաջին վկայն շինութեան աստ եդին և ապա աստի զհետ եկն բոլոր շինութիւն աշխարհահռչակ վանիցն սուրբ Նշանի:

Առ դրան Առաջադէմ խախտեալ եկեղեցւոյս կանգնեալ կան երեք քարեայ խաչք ի վերայ գերեզմանաց, և ի վերայ միոյ խաչաքարին վերոտառեալ կայ քառակուսի այսօրինակ արձանագրութիւն: «Ի թուին ՆԾԴ (905) ի հայրութեան Սիմէոնի ես Աթանագինէ և Փիլաքսոն կանգնեցաք զսուրբ խաչս ի փրկութիւն հոգւոց մերոց և ամենայն երկրպագուաց իւրոց և յաւգնականութիւն թագաւորին մերոյ Դաւթի»:

Ի վայր անկեալ միոյ գերեզմանաքարին գրի այսպէս. «Շնորհաւքն Յիսուսի Հրամանաւ Տէր Յովանիսի գրեցաւ և գիրս յիշատակի . . . եղբարց Անդրէի, Դանիէլի, Տիրաննոյ, Գորկայ: Ի հալալ արդեանց մեր շինեցաք զսուրբ Սիոնս բարեխաւս առ Քրիստոս մեզ և ծնողաց մերոց. և ընծայեցաք ի սմա Դէ. սպիտակ, գնածէգին. հացագումս Ռէ . . . Գանձահանքն: Մէն մի խաչաւգնէիւ զմեզ յիշել»: Ի ներքոյ սորա այլ իմն արձանագրութիւն. «Ա յլ և ինն պատարագ մեզ. գ. ի Ծննդեան, գ. Զատկին, գ. Սուրբ Խաչին. կատարիչքն աւրհնին յԱստուծոյ. ով խափանէ դատի ի Տեառնէ: Ես Տէր Յովանէս Զաքանզաւոր. կի գիմ էգին այլ ի սուրբ Սիոնս տվաք. ով հակառակի կամ խափանել ջանայ կապած է յԱստուծոյ, և մեր մեղացն տէր է»:

Բաւականաչափ հեռաւորութեամբ ի գիւղէն ի հիւսիսակողմն ի վերայ ճանապարհին Խրամաձորոյ կանգնեալ կան երկու խաչքարք մերձ առ միմեանս. առաջինն ունի զայս արձանագրութիւն: «Ցառաջնորդութեան Տեառն Յոհաննիսի՝ ես Միխիթար սպասաւոր սրբոյս կանգնեցի զխաչս ի բարեխաւսութիւն ինձ և ծնողաց իմոց, և եղբաւրորդոյ իմոյ Սարկաւագին, որք երկրպագէք, յաղաւթս յիշեցէք»:

Ցարևմուտս ի Հաղբատայ ի քարտգլուխ ձորաճամբին կանգ-

նեալ կայ գեղեցկաշէն խաչաքար այսու արձանագրութեամբ, « Յաւուրս Տեառն Համազասպայ եպիսկոպոսիս Հայրապետի . . . ես . . . կանգնեցի զխաչս· զիս և զծնողսն իմ և զԳրիգոր յիշեցէք ի Քրիստոս· ի թուին ՉԴ (յամի 1255) կանգնեցաւ սուրբ Սարգիս։

4) ՀԱՂԲԱՏԱՁՈՐ.

Ի գեղջէն Հաղբատայ դէպ յարեւմուտս իջանէ ուղի հարթեալ յատուածասէր անձանց· ի քարտգլխին կանգնեալ է խաչ քարեայ՝ պահապանն անցանողաց· ի ստորոտս քարափին կառուցեալ կայր կամարակապ սիւնազարդ շինուած « Վիճակի —խաչ » կոչեցեալ, այժմ ի հնութենէ ժամանակին վերնակամարն խախտեցաւ· բայց միւս շէնքն տակաւին կան հաստատուն։ Փոքր ինչ հեռաւորութեամբ աստի ի հիւսիսակողմն ի վերայ բարձրաւանդակ տեղւոջ առ ճանապարհաւն գոյ և այ խաչ քարեայ, որ Կոպրած քէմ կոչի· կանգնեալ ի Թումայ քահանայէն ըստ արձանագրոյն։ « Ի թուին ՈՄ· (1201) ես Թումայ անարժան քահանայ կանգնեցի զխաչս բարեխաւս . . . ինձ և ծնողաց իմոց և եղբարց· որք երկրպագէք՝ յիշեցէք ի Քրիստոս » ։ Աստի ի վայր իջեալ յանդիման լինի գերեզմանատունն Հաղբատաձորի քանի մի սրբատաշ տապանաքարիւք· գուցանեն ստոյգ զարկաձև յայժ փոքրիկ գերեզմանս « Սգոհի պապան » կոչեցեալ, զորմէ բազում բանս առասպելաբանեն բնակիչքն։ Աստ է և սուրբ Ստեփաննոս խաչաքարն հսկայաձև՝ կանգնեալ ի գլուխ սեպհական կալուածոց և այգեացն երզընկեանց։ Ի տեղւոջէ աստի գեղեցիկ լիմն պատկերանան զառաջեաւ այգեստանեայք Հաղբատեցւոց ի ձորագաշտին· մինաւանդ երկոքին գեղեցկատունկ այգիքն Սուրբ Նշանի վանաց։

Յայսկոյս վանական այգւոյն գոյանի սպաշէն եկեղեցի ի սրբատաշ, քարանց և այգին կոչի Վանքի մատուռի այգի։ Ի վեր քան զքարաշէն կամուրջն է ջաղացատեղին վանաց։ Զայս քարակերտ մատուռ շինեաց ի թուին Հայոց ՇԼԵ (1086) Սարգիս առաջնորդն Հաղբատայ ըստ արձանագրութեանն, որ փորագրեալ կայ ի թիւնոնս թեւաւոր խաչին, անկեղոյն առ ձորի ճանապարհաւ յեզր գետոյն, այսօրինակ· « Ի թուին ՇԼԵ· ես Տէր Սարգիս առաջնորդ սուրբ ուխտիս Հաղբատայ՝ շինեցի

զՓրաղացս և արարի աղատաղաց· արկի և զայգիս, տնկեցի և դդրախտս, զանազան մրգաբերօք ի փառս սրբոյ Նշանին և ի վայելուման տանս Հաղբատայ։ Արդ եթէ ոք զսա ի Հաղբատայ հանէ կամ աւերման պատճառ լինի ի մեծաց կամ ի փոքունց՝ կամ առաջնորդ՝ որ սմա շինուԹեանն չՓանայ, այնպիսինքն որոշեալ լիցին յԱստուածոյ և ընդ որդուոյն կորստեան ելցեն ի խաւարն արտաքին և յորդն անքուն»։ Ի վերայ սոյն իսկ խաչին գրեալ կայ և այս յիշատակագիրը «Ի ՇԼԸ Թուին (1089) ես ՏԷր Սարգիս առաջնորդս Հաղբատայ կանգնեցի զնշանս տէրունական, զՀն հաւատացելոց և պահապան Թագաւորաց մերոց Կիւրիկէի, Սմբատայ և ԴաւԹի՝ զարմի սոցա»։ Ի վերայ երկրորդ խաչին գրեալ է «ՑառաջնորդուԹեան ՏԷր Յովանիսի և ի տէրուԹեան Զաքարէի և Իվանէի՝ ես Յովսէփ . . . կանգնեցաք զխաչս . . . որք երկրպագէք յիշեցէք ի Քրիստոս. և առաւել զՅովանէս. ի Թուիս ՈՄԸ (յամի 1209)»։ Ի վերայ երրորդ խաչին արձանագրի՝ «Ի Թուին ՈՒԸ (1199) ես ՄխիԹար կանգնեցի զխաչս մեծ յուսով ի փրկուԹիւն հոգւոյ իմոյ· որք երկրպագէք՝ յիշեցէք ի Քրիստոս և զծնողսն իմ»։

Դարձեալ ի վերայ Հաղբատաձորի միւս անկեալ խաչին փորագրեալ կայ այսօրինակ արձանագրուԹիւն վասն վանականն յայնկոյս այգւոյն·

«Ի Թուին ՌԺԷ (1568) ես Սարգիս վարդապետ կրօնաւոր իմ՝ եղբարօքս կանգնեցաք զսուրբ խաչս ի ճանապարհիս, որ և զուգեցաք զայգիս իւր անառօվքն*) որ մին կողմն վանքի մատուռի այգին, մին կողմն վանքի բոլոր մեծ այգին, յորոց մէջն մին կարմիր խաչ կայ, մին կողմն Ժիվանքայ ջուրն է, որ իմ հայրենի այգին էր տուի վախմն**) Հաղբատայ սուրբ Նշանին, Ով խափանէ կամ խլել ջանայ յիմոյ կամ յօտարաց՝ սուրբ Նշանի խառվանքին գայ և նզուած է յԱստուածոյ և ԳՀԺԸ Հայրապետացն· ամէն»։

(*) Սահմանն կալուածատեղւոյն։ (**) Ընծայ յիշատակի։

ԳՕԴՈՒԱՅ ԾԷ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԲԵՐԴ.

Անցեալ ընդ այգեստանեայն Հաղբատաձորի առ ստորով լերինն Լոռի, ճանապարհաւն իջանես յեզր գետոյն Դէբէդայ. և ապա աստի դարձեալ յարևելն կոյս զառիվեր ճանապարհաւն ելանես ի կատարս բարձրավանդակ քարաժայռ լերինն. ուր է ամրաշէն բերդն Կայան, որ այժմ կոչի Դրսի—վանք, Այս ա-նառիկ բերդ չորս վերսաչափ հեռաւորութեամբ ի Հաղբատայ յարևմուտս շինեալ է ի թուին Հայոց ՈՁԲ (յամի 1233) ամուր պարսպօք ի մէջ Հաղբատայ և Սանահնի առ Դէբէդայ և ժիվանքայ գետովքն ի Տէր Յովհաննէս արքեպիսկոպոսէ քուերորդւոյ իշխանացն Զաքարէի և Իվանէի վասն պահպանութեան սուրբ Նշանին ի ժամանակս սահանման աշխարհիս մերոյ յանօրէն Խորազմեանց։ Տեղի այսր բերդի անառիկ է յոյժ և քարաժայռ. յերկուց կողմանց սորա իջանեն գետք յորդահոսք. ի հարաւային կուսէ ունի զմի դժուարադնալի ուղի, որ ելանէ նախ ի հիւսիսակողման բերդն, և ապա աստի ի վերին գեղեցկանիստ բերդն. ի մէջ որոյ յարևելս կոյս ի վերայ սեպացեալ քարափին կառուցեալ կայ գմբէթաձարդ եկեղեցի յանուն Աստուածածնի, ունելով ի վեր քան զսեամն դրան ի վերայ արևմտեան որմոյ զայսօրինակ արձանագրութիւն.

ՈՁԲ. Կամաւն Աստուծոյ ես Տէր Յովհաննէս առաջնորդ Հաղբատայ քուերորդի մեծի Պատրոնայ Զաքարէի և Իվանէի ի ժամանակի՝ որ երկաս սահանումն աշխարհիս մերոյ յանաւրէն Խորազմեանց ոչ գոյր տեղի ապաստանի սուրբ Նշանիս և եղբարցս. հրամանաւ քեռոյն իմոյ Իվանէի և որդւոյն իւրոյ Աւագին և Շահնշահի որդւոյ Զաքարէի շինեցի զամրոցս և զեկեղեցիս Հաղբատայ սուրբ Նշանիս բազում աշխատութեամբ։ Արդ եթէ ոք զսա ի Հաղբատայ հանէ թէ ի մեծայ թէ ի փոքունց զինչ և իցէ պատճառաւ մարդն այն նզովեալ եղիցի ի մահուան և ի կենաց՝ յԱդամայ մինչև ի գալուստն Քրիստոսի՝ ինչ նզովք կայ ի վերայ նորա. եղիցի երերեալ և տատանեալ որպէս Կայենի. և բաժին Յուդայի առցէ. և աւանդիչ հոգւոյ նորա սատանայ լիցի. և առաջնորդ սորա՝ որ կամաւոր նախան-

ձու կամ ծուլութեամբ կամ կաշառաւք զսա ի Հաղբատայ հանէք զվերոգրեալ նզովքն առցէ և ոլք հաստատեն աւրհնին յԱստուծոյ, և պարտին ինձ տէր Յովհաննիսիս զԱստուածածնի տաճնի գ· աւրն ի սմա պատարագն ինձ մատուցանել »։

Գմբէթ այսր եկեղեցւոյ ի 1827 ամի ի սաստիկ երկրաշարժութեանց խախտեալ կործանեցաւ· և քարինք նորա գլորեալ իջին ի Շրէկաձոր։ Սակայն ի 1836 ամի երեքին հարազատ եղբարքն Վարդան, Մարգար և Յարութիւն Յովհաննեան Երզընկեանք վառեալք աստուածային սիրով վերստին նորոգեցին ի ձեռն Եփրեմ վարդապետի զեկեղեցին, հինեցին ըստ առաջինն ձևոյն զգմբէթն ի հալալ արդեանց իւրեանց ի փառս Աստուածամօր կուսին։ Զկնի ելից Մարգարին ի կենցաղոյս զմարմին նորա թաղեցին ի շիրիմ արտաքոյ որմոյն աջակողմեան դռոյն, որոյ տապանագրութեան օրինակն է այս։ « Ի ներքոյ ս՛իմիս հանգչի մարմին Մարգարայ Երզնկեանց, վերանորոգողի տաճարիս, որ ննջեաց ի Տէր 1842 ամի ի հասակի 67 ամաց »։ Ի բարձրահայեաց տեղւոջէ աստի գեղեցիկ իմն տեսանի հրաչակաւոր վանքն Հաղբատայ նաև համօրէն պտղաբեր այգիք գեղջն, որ ի ստորոտս ամրոցին։

Յայսմ ամրոցի եղեալ է աղբիւր բերեալ յՕրնակ գեղջէ, և մեծաւ ճարտարութեամբ ի ստորին վայրէ խողովակաւ հանեալ է ջուրն։ Այժմ աւերակն սրբատաշ ջրհորի առ դրան եկեղեցւոյն տեսանի միայն լցեալ քարամբք։ Հիմունք լարաձև շինուածոց, սենեկաց, բարձրարերձ աշտարակաց, բրգաց և կամարակապ սիւնազարդ դրանց ցարդ ևս ցուցանեն զճարտարապետութիւնն նախնեաց մերոց։ Յարևմուտս ի մէջ ամրոցիս գտանի դպրոցատեղին բաժանեալ յերիս դասատունս, որ առ ժամանակ եղև ընդ վարչութեամբ մեծի վարդապետին Վարդանայ, որ զկնի շրջաբերական թղթոյն Կոստանդեայ կաթուղիկոսի եկաց աստ և ուսոյց զաշակերտս։ Ի հարաւոյ ամրոցիս է մուտն հակառակ, որ ընկալաւ զայս անուն ի հակառակութենէ Գրիգորիսի եպիսկոպոսի Տուրէորդւոյ ընդ Մխիթարայ եպիսկոպոսի առաքեցելոյն ի Զաքարիայ սպասալարէ վասն առնելոյ զքանի մի արարողութիւնս ըստ Յունաց։ Զքաղուածս ի գրուածոց Կիրակոս պատմագրի դիցուք աստանօր ի գիտութիւն բանասիրաց։

Լևոն արքայ Հայոց՝ Յովհաննէս և Դաւիթ կաթուղիկոսունքն ժողով արարին յարևմուտս Հայաստանի վասն խնդրոյ Զաքարիայ սպասալարի՝ որ ցանկայր զաջն ինչ սերոնացականս ընդ Վիրս ի միում աւուր կատարել և վրանաւ պատարագել։ Ժողովն հաւան գոյաւ ընդ խնդիր Զաքարիայ, ուստի Յովհաննէս կաթուղիկոս՝ որ ի Կլայն Հռոմկլայական, առաքեաց վրան մի գմբէթայարկ եկեղեցաձև, սեղան մարմարոնեայ և զայլ սպասս պատարագի և զեպիսկոպոս մի Մինաս անուն հանդերձ գեղեցկաձայն (համեղաձայն) քահանայիւք, սարգաւագօք և դպրօք. որք եկեալ յանդիման եղեն Զաքարիայ ի քաղաքն Լօռի և ետուն նմա զհրամանաթուղթն և զբ[illegible]ծայան կաթուղիկոսին։ Նմանապէս ի Լևոն արքայէ և ի Դաւիթ կաթուղիկոսէն եկին դեսպանք և հրամանաբերք։ Ընդ որ ուրախացեալ Զաքարիա հրամայեաց ժողով առնել ի Լօռի քաղաքի ի կատար աճել զհրամանսն քանի մի արարողութեանց և վրանաւ առնելոյ զպատարագն ի հարկաւոր դէպս։ Առ այս վաղվաղակի ժողովեցան առ Զաքարէ սրևեւլեան եպիսկոպոսունքն — Գրիգորէս եպիսկոպոս Հաղբատայ, Վրթանէս եպիսկոպոս Բջնոյ և Դվնոյ, Սարգիս աթոռակալ Անւոյ, Յովհաննէս եպիսկոպոս Կարուց և այլք, նաև երևելի և քաջխմաստ վարդապետք և առաջնորդք վանօրէից — Մխիթար Գօշն, Իգնատիոս, Ստեփաննոս, Վարդան, և Դաւիթ Քոբայրեցին ի Հաղբատայ, Յովհաննէս Հայրն Սանահնի, եղիա ի Հաւուց — Թառայ, Գրիգոր Դվնեցին, Սարգիս միաբնակեացն ի Սևանայ, վանական վարդապետն Հանդերձ երևելի գիտնական քահանայիւք վանից, քաղաքայ և գիւղից և այլ աշխարհական ամբոխիւք։ Իբրև գիտացին և լուան զհրամանս կաթուղիկոսացն և թագաւորին իսկ՝ ոմանք հաւանեցան և կէսքն ոչ. և այնպէս անմիաբանք լեալ քակտեցան ի միմեանց։ Ի ժողովի սմա էր Խաչատուր վարդապետն Կեչառեցի, որ երգեաց զհրաշալի երգն «Խոհեաւք խոյին» ի ժամ պատարագին։ Բայց Զաքարիա սպասալարն ըստ կարգադրութեան կաթուղիկոսացն և թագաւորին Հայոց Լևոնի զամենայն ժամանակս կենաց իւրոց վարեցաւ որպէս և կամէր։ Յետ կիսակատար ժողովոյն առաքեաց ապա Զաքարիա զմինաս եպիսկոպոսն՝ որ եկեալն էր ի կաթուղիկոսէն ի Հայրաստ իւր պաշ-

ոճնէիւքն դի և զնոյն սրասցեն. և մինչ գայր նա հուսկ ի վանքն առաքեաց Գրիգորէս եպիսկոպոս Հաղբատայ արս, որք սաստիկ հարին զնա բրօք և զպաշտօնեայս նորա և վէրս եդեալ ի վերայ թողին կիսամահ. զՂորիսն՝ որք էին ընդ նմա բեռնակիրք, գահավէժ արարեալ սատակեցին. և բարձեալ զեպիսկոպոսն մահճօք տարան առ Զաքարէ, որոյ տեսեալ զայն բարկացաւ յոյժ ի վերայ Գրիգորիսի մահու չափ սպառնացեալ ի վերայ նորա, բայց նա փախստական անկաւ յաշխարհն Կարնոյ։

Ցետ անցից այսոցիկ մինչև ցայսօր անճուկ տեղին այն կոչի Հայաւանօ, և վերին տափն Հայաւանայ - Հողէ, զի նորաձև փոփոխութիւնն ի ծէսս հայրենի հին եկեղեցւոյ ծնաւ զհակառակութիւն, զոր արար Գրիգորէս եպիսկոպոսն Հաղբատայ, և եղև պատճառ ամենայն եկեղեցեաց այնուհետև վարիլ առաջին պաշտամունքն մինչև ցայսօր ժամանակի։

Այս բերդ որ ընդ երկար ժամանակս տեառն բազում փորձութեանց և անցից՝ երախտաւոր համարի ամրութեամբն. զի պահպանեալ է միշտ զժողովուրդս ապաստանեալս ի սա մինչև ի ժամանակս Թաթարաց, որպէս գրէ Կիրակոս. Թէ ի բերդի աստ ամենայն բնակչօք գաւառին ամրացաւ Աւագ իշխանն որդի Աթաբէգ Իվանէի ի ժամանակս յարձակման Ջարմայ - Ղանին Թաթարաց, որոյ զօրավարն Խուռղատայ բազում զօրօք եկեալ պաշարեաց զբերդն շուրջանակի. և յղեաց պատգամս առ իշխանն Աւագ գալ ի հնազանդութիւն։ Իսկ նորա կամեցեալ շահել զմիտս նորա ետ զդուստրն իւր ի կնութիւն զօրավարին, զի թերևս թուլասցի ի պաշարմանէն. բայց առեալ զայն առաւել և ստիպեաց անձնատուր լինել։ Գտին տապա զակն աղբեր յՈրնակայ բերեալ աստ ջրոյն, խստոբեցին զգնացս ջրոյն. ուստի ծարաւութիւնն բռնադատեաց բերդականացն ակամայ անձնատուր լինել։ Զայս տեսեալ Աւագ իշխանին առաքեաց զվերակացու տանն իւրոյ զԳրիգոր, զոր Տղայ կոչէին, յազատացն Խուչենոյ առ Ջարմայ - Ղանն, որ հարեալ էր զխորան իւր առ ափն Ծովուն Գեղարքունեաց՝ խնդրել զերեսս նորա. իբրև ետես մեծ Նուինն (թագաւոր) ուրախ եղև յոյժ. պատգամս առաքեաց առ զօրապետն իւր, թոյլ տալ Աւագին անվնաս գալ առ ինքն, և ոչ ևս նեղել զբնակիչս բերդին և գաւառացն։ Ցետ այսորիկ ելեալ գնաց իշխանն Ա-

ւագ առ մեծն Զարմայ-Ղան, որ ընկալեալ զնա մեծաւ յարգանօք, յանձնեաց նմա վերստին զկառավարութիւն երկրին իւրոյ. ազատեալ ի պատիւ նորա զբազմութիւնն գերելոց և արար խաղաղութիւն և դիւրութիւն բնակչաց երկրի նորա։

Զշինութենէ և զկործանմանէ Կայան բերդիս այսպէս գրէ Կիրակոս պատմագիր. «Ընդ Ենթաց (միւս Յովհաննէս եղբօրորդի առաջնոյն) բերդ մի ամրագոյն պարսպօք ի մէջ Հաղբատայ և Սանահնի. վասնորոյ գժտութիւն ընդ երկուս մեծամեծ վանօրայս եղև, որպէս թէ ի հողոյ Սանահնին էջէ. և վրէժխնդիր եղև Շահնշահ որդին Զաքարիայ ի Սանահնին . . . . զի Հաղբատ ի Վրաց թագաւորի հաշուին էր. յայնմ ժամանակի իբրև մեռաւ եպիսկոպոսն Յովհաննէս, քակտեցին զպարիսպս բերդին հրամանաւ Թաթարին»։

Տէր Յովհաննէսեան մեռաւ. խողովակաջուրն յորնակայ կըտրեցաւ. Կայան բերդն ունայն տեղն կործանեցաւ հրամանաւ Թաթարին. Շահնշահն ինքնահաւանութեամբ բարձրամտեցաւ. ուստի ապաստանեալք ի սոյն անստնանելի բերդ ժողովրդականք խոպատ անտէր, անջուր, անհաց ոչ կարացին կեալ. ականմայ անձնատուր եղեն թշնամեաց. անգթութիւնն, սուրն և և սովն վախճան ետ բերդական ժողովրդոց մեծաց և փոքուանց։ Ո՞վ է մեղաւոր. պարզ ասեմ, մեք եմք պատճառ և առիթք. խորամանկ թշնամին է մեր գործի, գործին գործէ, մեք ապերախտս պարծիմք ի կորուստ ազգին՝ ձեռամբ Թաթարին։ Բազմաթիւ օրինակս ազգաւեցուցութեան կարեմք տեսանել ի մեր ազգային պատմութենէն։ Թող, բերկրեսցին այժմ քայքայեալ ոսկերք Շահնշահի, որ եղև պատճառ կործանման Կայան բերդի, և կորստեան հայկազն ժողովրդոց։ Թող տրտմեսցի բերդաշէն Տէր Յովհաննէսեան արձանագրութեամբ իւրով ի վերայ Շահնշահի, որ եղև ուխտադրուժ յայսմ անցողական աշխարհիս։ Թող նոքա այժմ ի հանգերձելումն պատասխանիցեն միմեանց վասն ի զուր հեղեալ անմեղ արեանց։

Թէպէտ այժմ քակտեալ կայ պարիսպ այսր բերդի գոգոյս մինչև ցհիմունս իւր հանդերձ ամենատեսակ շինուածովքն, սակայն ունի արդէն զիւրն բնական ամրութիւնս։ Ցիւրաքանչիւր ամն բնակիչք Հաղբատայ և մերձակայ գիւղօրայիցն յաւուրս Նոր կիւրակէի և Համբարձման Տեառն յաճախեն աստ ի

տօնախմբութիւն Աստուածամօր եկեղեցւոյն մումեղինօք իրնկօք և պատարագօք և կատարեն զմեծ հանդէս ուրախութեան և վիճակախաղի։

ՅՕԴՈՒԱԾ ԺԸ.

ՎԱՐԱԳԱՑ Ս. ԽԱՉ.

Սուրբ կոյսն Հռիփսիմէ ընկերօք հանդերձ փախուցեալ ի հալածանաց Դիոկղետիանոս կայսեր եհաս ի Հայաստան աշխարհ ունելով ընդ իւր ղՆշան Փրկչական խաչին, որով յամենայն տեղիս առնէր նշանս և մեծամեծ սքանչելիս։ Հասեալ ի գաւառն Տարօնոյ բնակեցաւ առ ժամանակ լինչ ի վայելուչ վայրին, որ Սո–ղբ Խաչ կոչի, իսկ այժմ ասի Ղ–ո–ո–ո—Բաշ՝ի հարաւոյ կուսէ վանայ—Բերդի։ Ասաի փախստեան պատճառաւ էլ ի լեառն Վարագայ ի բարձր տեղին որ կոչի Գալէնիա և անդ ձեռամբ իւրով ամիոփեաց զսուրբ Նշանն ի քարանձաւին, և ինքն իջեալ ի լեռնէն առաջնորդութեամբ Հոգւոյն Սրբոյ գնացեալ եհաս ի Վաղարշապատ քաղաք, ուր վկայեաց, և զնահատակութեան պսակն ընկալաւ սուրբն Հռիփսիմէ ԼԴ ընկերօվք իւրովք ի ձեռն մեծին Տրդատայ թագաւորին մերոյ՝ բայց երկու քահանայք և այլք ի կուսանացն դադարեցան ի լեառն Վարագ ի սպասս սուրբ Նշանին, զորս եկեալ ապա սրբոյն Գրիգորի Լուսաւորչին քաջալերեալ մխիթարեաց և հաստատեաց ի տեղւոջ անդ ղեկեղեցի վասն մնացելոցն։ Ցետ այսոցիկ անբնակ մնայ տեղին այն ի պատճառս խստութեան օդոյն, թէև աստղաբութեամբ գիտէր ամենայն աշխարհ Հայոց զլինել սուրբ Նշանին ի լեառն Վարագայ, բայց ոչ գիտէին թէ հաւաստեաւ յորում տեղւոջէ, մինչ ի ժամանակս մեծին Վարդապետի Իշխանաց իշխանին Տանն Սրբազունեաց։

Ի 640 ամի ի հայրապետութեան Տ. Ներսիսի Շինողի այր ամն Թոդիկ անուն կրօնաւորեալ ի լերինն Վարագայ ի տեղի բնակութեան սուրբ կուսանացն հանդերձ սրբասնեալ աշակերտաւն իւրով Յովհէլեաւ գերազանցեալ ի վարս ճգնողականս տենչայր գիւտի սուրբ Նշանին, ուստի ետ ղանձն իւր ի խորին ճգնութիւն զաւուրս 10· անսուաղ պահեալ հայցեր ի Տեառնէ տեսանել զփափագելին իւր։ Իսկ մարգասէրն Աստուած, որ ցկամս երկիւղածաց իւրոց առնէ, լուաւ աղօթից նորա, մինչ-

դեռ կայր յաղօթս հայրն Թոդիկ աշակերտաւն իւրով Յովելեաւ ի մէջ գիշերին նշան լուսեղէն յայտնի երևեցաւ ի լերինն Վարագայ, որպէս գրէ Պատմաբանն Թովմայ Արծրունի։

«Երևացան գանձք աստուածային նշանին՝ յորոյ վերայ եհեղ զարիւն Միածին Որդին Աստուծոյ. և էր համբարեալ ի լերինն Վարագայ ի գագաթն քարանձաւին ի ձեռն սուրբ որոջին և Թագաւորացն կուսին Հռիփսիմեայ, յայտնեաց Աստուած, որպէս և յաւուրսն Կոստանդիանոսի արքայի և Կիւրղի հայրապետին, զնոյն և ի գաւառն Վասպուրական ի լեառն Վարագայ ցոլացեալ նշան Տէրունական Խաչին. յերբորդ ժամու թուլացեալ ի գագաթանէ քարանձաւին բնակեցաւ ի նոյն լերինն ի հովիտ մի, ուր են աղբիւրք բարեհամք։ Եւ սուրբ Թագաւորն Սենեքերիմ շինեաց ի նոյն տեղւոջ եկեղեցիս մեծածախս, և ի ստորոտ լերինն շինեաց ղհոյակապ և ղհռչակաւոր մայրաքաղաք մենաստանին զՎարագ և կարգեաց ինձա այս հաւատարիմս և զարդարեաց բաղում՝ կրօնաւորօք և երկնագումար դասուք սուրբ քահանայից, կարգեաց նոցա ուրիկս և կէրն ի խաղաղութեան ի գաւառն Վասպուրականի»։

Նոյն Յայսմաւուրս վասն գիւտի Խաչին գրի այսպէս։ «Ընդ ժամուցաւ լուսեղէն սուրբ Նշանն ի վիմէն, և ի մէջ լուսոյն վերամբարձեալ փայլեղէն խաչն պահարանաւն իւրով և դոյ լացեալ եմուտ սքանչելի լուսով յեկեղեցին, ուր ապօթէին նորա (Հ. Թոդիկ և աշակ. Յովել) մնաց լուսեղէն ճառագայթեալ նշան սուրբ խաչին ի վեց ժամէն աւուրն մինչև ցինն ժամն. և հզնաւորքն մինչդեռ կային ահիւ զարմացեալք, ձայն եղեւ առ նոսա ի Խաչանիշ լուսոյն՝ որ ասէր. «Ասա հաճեցար Աստուած՝ բնակել սուրբ Խաչիս ի պահպանութիւն և ի փրկութիւն աշխարհիս»։

Ձայն ձայն լուան, և զայն նշան հրաշիւղ տեսին բազում ի ժողովրդոց յաղագս իշխանաց. ուստի և իշխանաց իշխանն Վարդ պատրիկ եպիսկոպոսօք, քահանայիւք և ամենայն ազատագունդ ղօրօք վաղվաղակի հասին ի լեառն, երկրպագեալ սուրբ Նշանին, փառս ետուն Աստուծոյ։ Շինեցին բայց յ12 լուսեղէն սեանսն այլ և զեկեղեցին, ուր եկեալ հանգեաւ սուրբ Նշանն, կարգեցին մեծահանդէս տօն սուրբ Նշանին Վարդավայ ամ յամէ, զոր կատարէ եկեղեցի մեր յեօթներորդ կիւրակէի յետ Խաչվերացին առանձին տօնիւ։

(Կը շարունակուի)։

Ռուսատմ—Բէկ Երզնկեանց։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՖՐԴՈՒՍԻ.

Զայս երկոսին հատուածս, որ ի ներքոյ, արձակ թարգմանութեամբ յեղեալ մեր ի հայ՝ ի Շահնամէէն՝ այն է ի թագաւորաց մատենէն Պարսից, առաջարկեմք ընթերցողաց որպէս խուն ինչ ճաշակ դիւցազներգութեան հանրահռչակ վիպասանի նոցա, հանդերձ համառօտ կենսագրութեամբ նորա *):

Մեծ վիպասանն Աբուլ—Ղասէմ ծնաւ ի տասներորդ դարու ի գիւղն Թուս Խորասանայ, որ և ապա ուղղեալ զանուն ծննդավայրին՝ փոխելով զաղաւաղեալն Թուս ի հինն և յուղիղն Գրդուս կամ Գարդուս (պարտէզ — paradisus) մականուանեցաւ Գրդուսի այսինքն Պարտիզեցի կամ Դրախտեցի, և ոչ «որդի դրախտի» կամ «դրախտային», որպէս սխալ թարգմանեն ոմանք, սխալ արտասանելով և զանունն Ֆրդո—ս կոչելով։

Եկեալ նորա ի Ղազնէ քաղաք աթոռանիստ Մահմուդ արքայի Ղազնէվեան, յարեցաւ յարքունի բանաստեղծապետն Ռուդեգի, որոյ սկիզբն էր արարեալ գրել զՇահնամէն, և ի սուղ ժամանակի բնատուր ձիրք Գրդուսեայ ետուն նմա մեծապայծառ փայլել ի քանքարաւոր քերթուածս, Սմին իրի և ի մեռանել բանաստեղծապետին, ինքնին և եթ յառաջ մատուցանէր զործ մեծի վիպասանութեան Շահնամէին խմբագրելով յանգիր և ի գրաւոր զրուցաց, յարքունի քարտիսից և ի գուսանական երգոց, նա մանաւանդ ի նախնի յիշատակարանաց, որ գտանէին առ մնացորդս արևապաշտ Պարսից գէբէր կոչեցելոց։ Ընդ որ կարի հաճ և հաւան գտեալ և սատար հովանաւոր՝ ուսումնասէրն և նախանձայոյզն հայրենի փառաց Մահմուդ արքայ, որ և իսպառ եհար զԱրաբացիսն և ընդարձակեալ հաստատեաց զինքնիշխանութիւն իւրոյ հայրենի աշխարհին, խոստացաւ ի վախճան գործոյն փոխարինել զվէն մի ի տողից արքայապատում մատենին կշիռ հաւասար ոսկւոյ։ Ուստի իսրախուսեալ և վառեալ աշխոյժ ոգեբուխ և հանճար բեղմնաւոր անմահ վիպասանին, անհամեմատ երկասիրութեամբ թևաւոխեաց ոգել հանգոյն Հոմերականին զվիպական պատմութիւնն, երգելով սքանչելի իմն անսպառ խանդիւ զփառս դիւցազնացինս և զարկածս յեղյեղուկ բաղդի հայրենեացն, ի վաթսուն հազար տողս հանճարեղ բանահիւսութեան, ի

(*) Ընտիր եւ գեղեցկագրութեան գրչագիր — պատկերազարդ Շահնամէից պահի ի գանձարանին արքունի ի համառարանոցի մատենից թագաւորաց, գտանին նմանապիսի թանկագինք առ իշխանս Պարսից, ցատկագրութիւնք ի տպագրելոց են տպեալքն ի Հնդիկս, այլ անշուք եւ առանց նկարագրեալ յօրինուածոց, եւ ահագին ստուարութեամբն արժէ մէն մի առաւել քան զտասն րուբլի արծ. վիմագիր տպագրութեան պատճառաւ։

Ծան. Թ.

զուտ և հարազատ պարսկապահչաւիկ լեզուս, որով ոչ միայն հայրենի ազգքատին լեզուաւն մրցեր և յաղթեր արաբախօս — պարսիկ բանաստեղծից ժամանակին, այլ և յետս անգրկեն մղեր զօտարամուտ արաբականն ճոխապանծ լեզուս, որ շնորհիւ գերիշխանութեան մարգարէաբարբառ Ղուրանին, ջնջել և փոխարինել բարուրեր զլեզուն գեղեցիկ իւրոց հայրենեաց, իբրև բարբառ պիղծ արևապաշտ — կրակապաշտից և անճահ անարժան շրթանց Ջէգիդ — Իսլամաց (նոր ուղղափառ հաւատացելոց)։

Սակայն Մահմուտ յաւարտ մեծագին գործոյն գրժեաց զխոստումն արժանաւոր և փոխանակ ծանրագին ոսկւոյ կշռեաց արծաթ թեթևագին ի տրիտուր անգին վաստակոց առնն մեծի, որոյ ոչ միայն անվթար կացուցեալ էր զգանձս հնութեան հայրենեացն ի մոլեռանդն Արաբացւոց, որ ի հուր և ի ջուր սպառնին որ ինչ ոչ էր ի բարբառ մարգարէին (Ղուրան), այլ և ահագին քանակութեամբ վսեմ քերթուածոցն՝ թէպէտ առասպելախառն՝ յաւերժացոյց զփառս հայրենեաց և ընդ նմին զանուն Մահմուդայ։ Ուստի և առաւել քան ընդ արժանաւորութիւն վարձուցն՝ ընդ անաղնուութիւն ապիրատութեանն ի խոր խոցեալ, հրոյ ճարակ ետ զամենայն գովասանականն իւր ուրոյն յօրինեալ զՄահմուդայ, և կցեաց ի վերջկոյս մատենին կծու իմն երգիծաբանութիւն ի դէմս նորա, որ ունի սկիզբն այսպիսի. «Եթէ արքայ էր ի մօրէ արքայածին, ոսկի և արծաթ հասանէր ցքարձս իմ» և այլն, որով յանգիմանելով զանազնիւ ծնունդ նոցա, բողոքէ եպերելով զանարդար արարս նորա ըստ այնմ։ Եւ ընկեցեալ զարծաթն, գնայ մեռանի ի Թուս առ անշնարին տրտմութեանն, Իսկ Մահմուդ ստրջացեալ առաքէ զհետ նորա զկրկնապատիկ վարձուցն, այլ անագան, և գրաստքն գանձաբարձք ժամանեն ի Թուս յաւուր թաղմանն, զոր մահագին նորա համարեալ՝ ըստ օրինի շարիաթին բովանդակ ծախի ի շինութիւն կամրջին յանուն Ֆրդուսւոյ՝ ի վերայ վտանգաւոր գետոյն մերձ ի Թուս, և լինի այնու կրկին վարձք բարեգործութեան անմահ վիպասանին, մին ի կենդանութենէն և մին ի մահուանն, միովն անմահանայ յընթերցողաց մատենին՝ բացագանչութեամբս — Վեցցե՛ս Ֆրդուսի, և միւսովն յիշի յանցաւորաց կամրջին՝ օրհնութեամբս — ողորմի՛ Ֆրդուսւոյ։

Արդարև արժան էր փոխել ի հայ զընտիր ընտիրս ի քերթուածոց մեծի վիպասանին, զոր յիրաւի բանասէր — մատենախօսք եւրոպացիք միաբանին գովել, մանաւանդ զհրաշալի նկարագիրս պատերազմաց և զվէպն չնաշխարհիկ Ֆրանգիսի (Հրանգէսի) մօրն Քայ — Խոսրովու (Մեծին Կիւրոսի), զորմէ ասեն քննադատքն եւրոպականք, «Ապաքէն ակնյանդիման երևի թէ ո՛րպէս ոգին ասիական վաղ ուրեմն գիտեր ի վեր հանել և ներհուն ճարտարութեամբ նկարել զամենաազնիւն՝ զամենախորինն և զամենաքնքոյշն գորովագութ զգացմանց հոգւոյ։ — Սմին իրի սրտի մտօք ընթեռնու ոգևորի, յափշտակի ընթերցողն պարսիկ, և է որ ի բերան առնալ զլուանդակութիւն ընտիր հատուածոցն, զարմանալի ոգելից առոգանութեամբ պատմեն անգրագէտքն և գործաւորքն անգամ՝ ամիկ, յորժամ գործեն

զգործ պատշաճ ունկնդրութեան. ի սոյն մաշեն և բազումք ի դեղջկաց վերկայնութիւն ձմերային գիշերոյ, առհասարակ արք և կանայք և մանկունք անգամ ախորժանօք անձանձիր լսելով զպանչելի գործս Ռուստէմայ Սագճկի (Սաջաստանցւոյ կամ Սագաստանցւոյ) և զհրաշալիսն Րոխշ նժուգի նորա՝ նմանահանգոյն արծուենման Սեաւին գեղեցկի մերս Արտաշիսի, զառասպելախառն այլաբանութիւնս քաջամարտ — դիւաբաղ Հուշանգի՝ հանգոյն մերս վիշապաքաղ Վահագնի, զդիցանուէր վեհութիւնս արդարադատն Անուշիրուանայ (Անուշաւանայ), նա մանաւանդ զհրաշապատում վէպն Գրանդխսի, լի չքնաղ նահատակութեամբք առաքինութեան և կենդանի նկարագրութեամբք, այլովքն հանդերձ, յորոց առ այժմ զայս երկու դոյզն հատուածս և ևթ առ ձեռն պատրաստ ունիմք ի լոյս ընծայել, ըընտրելագունից թարգմանութիւն Թողլով այլոյմ նուագի։

Սամուէլ Գիւլզադեանց.

1.

Ի ՄԱՀ ՔԱՋԻՆ ՍՓԱՆԴԵԱՐԱՑ (ՍՊԱՆԴԱՐԱՑ).

Ծամ է արդ քամել բաժակ մի անուպակ անուշահամ գինւոյ՝ մինչդեռ շունչ քաղցրասիրք գարնան բերէ մեզ զհոտ անուշից հովասուն լերանց։ Ծաղիկք գարնանայինք պսակեն զսաղարթս անտառախիտ մայրեաց և բլուրք շողան ի փայլիւն հրաշէկ կակաչաց և ի նարօտ պէսպէս երանգաց։ Հրճուէ սոխակ գեղգեղելով ի ծոց սիրանոյշ վարդենեաց և գոհար վարդ փթթէ պչրանօք ի լուր երդոց խօսնակին։

Եւ լիցի՞ն արդեօք այլ ևս լսելի հեշտալուր դայլայլիկք նորա, յորժամ բաժանն վարդագոյն՝ վարդենւոյ ծածկեսցի մարգարտաշաղ քաղցրահոս ցօղով գիշերոյ։ — Ո՛չ. աւանիկ յառաջ խաղայ ամպ մռայլ՝ հալածական վարեալ ի փոթորկալից հողմոյ . . . Ոչ է այդպէս՝ յորժամ ննտեալ խօսնակն ի գեղուղէշ փունջ վարդենեաց՝ երգէ զսէր իւր խանդակաթ. Ո՞ գիտէ զինչ նա խօսի արդ . . .

Նա ողբայ զՍպանդար. զՍպանդարն բարձեալ կապտեալ ի փառաց անդաստին ի մատաղատունկ տիոցն երիտասարդութեան։ Նա պատմէ քեզ յորդեւոյ զհինաւուրց անցից անցելոց, զոր սովոր էին նախնիք մեր պատմել հարցն մերոց։

2.

ՄԵՆԱՄԱՐՏ ՔԱՋԻՆ ՍԱՄԱՑ.

Ընդ երեխ հզօր արքային Մանուչէհրի (Մանաճիհրի), անկաւ անդէն որդի նորա Սամ ի վերայ երեսաց և երկիր եպագ նմա։ Ծարեաւ հայրն օգոստափառ ի գահոյիցն փղոսկրեայ և սփռեցին կայծակունս հրոյ մեղսիկք և տպալիոնք ականաղարդ թագի նորա։ Զգեաւ զձեռն իւր շնորհալից նստոյց առ իւր զՍամ, և ի հարցանել հօրն ասիպաւ՝ թէ զինչ եղեն գայլքն մարգահաշոշք խաւժադուժքն Մազանդրանեայք (Վրկանք), ետ

պատասխանի Սամ և ասէ. Ո՛չ ևս են, հայր, և յաւել պատմել նմա զկնի պատերազմին՝ օրինակ զայս.

Դիմեալ գայր որպէս գայլ արեան ծարաւի՝ անցեալ ի գլուխ հրոսակին՝ Կարկաւոյ եղբօրորդի մեծի արքային Սալեմայ, Զափ հասակի նորա վիթխարի հաւասարէր մետաղատունկ մայրւոյ և քաջքն դիւցազանց անգամ խիթային յերևեաց հսկային սերելոյ ի զոհակաղարմ վիշապածին մօրէ։

Իբրև տեսին զնա քաջամարտիկքն իմ ընդ մէջ փուշոյն փոթորկելոյ ի ներքոյ ոտից նորա, շրջեցաւ անդէն զոյն երեսաց նոցա ի դալուկն մեռելատիպ։ Ի բաղխել մարտին երկուստեք, յարձակեցայ անկայ հապճեպ ի մէջ հեծելազօրուն, և ընդ մէջ ձեղքեալ զգունդն ստուարաթիթ՝ հորդեցի ինձ ւեահ զարհուրելի երկաթագամ դնդափայտիւս։ Սլացաւ նժոյգն իմ օդապարիկ զերթ փիղ ամեհի և երկիր սասանէր ի ներքոյ ոտից սալաստիկակ երիվարացս հանդոյն ալէծուփ կոհակաց Նեղոսի։ Քաջալերեցաւ յիս գունդն իմ և զհետ իմ խեղախեաց ի վտանգիցն աներկեան։

Իբրև ետես Կարկաւոյ զնախաձիրս իմ, զոր ընդ աջ և ընդ ահեակ ճակատուն դարձէի, ծանեաւ զիս, և հանգոյն յանդուգն որսահալած վագեր թակարդէր ինձ զպատան ձեռին ըմբռնել զիս ի հաղր։ Գիտացի զննդութիւն մտացն, կալայ զպղեղն իմ և արձակեցի դէպ ուղիղ ի նա զերկաթասլաք նետս իմ կաղամախեայ։ Թռեան նետքս թեթև զերթ արծուի սրաթռիչ . . . կորեաւ նա վայրիկ մի յաչացս և ահա անդրէն միւսանգամ ևկն յերևան դէմյանդիման իմ ի մէջ արիւնախառն փուշոյ, ճոճելով ի ձեռին զսուրն իւր պողպատիկ ականակուռ, և դողայր երկիր ի դափիւն ոտից։ Պուռ եառ խուն ինչ երիվարին իմում և կացի մնացի նմա անդէն կուռ և կազմ։ Ծարձակեցաւ յիս վայրագն վարազաբար կշռեաց ետ ընդ ետ զհարուածս մահաբեր սրոյն, այլ իմ խոյս տուեալ ի սրոյն, վրիպեաց կշիռն։ դարձայ շուտափոյթ, բուռն հարի զսաղաւարտէն և անհատատալի իմն ուժգնութեամբ ընդ թաւ կօրճանեցի զնա յերկիր արիւնաշաղախ և մեռեցի զսուր իմ յախնդիան։

Թարգ. ՍԱՄՈՒԵԼ ԳԻՒԼԶԱԴԵԱՆՑ։

ՖՐԴՈՒՍԻ

ԱՋԳԱՅԻՆ

Այն՝ ինչ որ սորանից ոչ աւելի քան եօթանասուն տարի առաջ կատարուէին Մայր Աթոռիցս ուղարկուած նուիրակները, հայրապետական օրհնութեան հետ բաշխելով ժողովրդեան սրբալոյս միւռոնն և վառելով ժողովրդեան սիրտը աստուածային երկիւղով և ջերմեռանդն զգացմամբ առ աղդն և եկեղեցի և առ Մայր Աթոռս, որով անաղարտ էին մնում թէ ժողովրդեան բարքն և թէ եկեղեցւոյ պայծառութիւնը ըստ ազգային սովորութեան, այդ պարտքը նուիրակութեան բարձուելովը վիճակաւոր առաջնորդները պէտք է կատարեն այժմ, որոնք իրանց հոգևոր պարտականութիւնները կատարելով հանդերձ՝ իբրև Մայր Աթոռոյս միաբան հարազատ որդիք՝ պէտք է ժողովրդեան եռանդն բորբոքեն չըմոռանալ Մայր Աթոռը, այլ կամաւոր և սրտաբուղխ նուիրաբերութեամբ աւելցնել Մայր Տաճարի վառքը ճոխութեամբ և պայծառութեամբ։

Ահա այս իսկ սկզբունքով առաջնորդուած Աստրախանի Հայ ժողովրդոց կառավարիչ Գեր. Տէր Սուքիաս Սրբազան Եպիսկոպոս՝ նշանակուած լինելով Սինոդի անդամ և հրաւիրուած՝ վարելու իւր նոր պաշտօնը՝ պարտք է համարում դիմել ժողովրդեան որ նոքա կամաւոր նուիրատուութեամբ ըստ կարի յաւերժացնեն իրանց յիշատակը Մայր Աթոռումն. ոտանալով նոյնպէս և եկեղեցիներից զգետեղէնք յատուկ ցուցակով հասցնում սուրբ էջմիածին։

Մաղթելով վարձ ըստ բարեաց ի բարերար Տեառնէ մերմէ նուիրատու անձանց համար՝ յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը թէ նուիրատու անձինքներին և թէ Գեր. Տէր Սուքիաս Սրբ. Եպիսկոպոսին, և ցանկալով որ այս քանը օրինակ լինի այլ թեմականաց մեծ գոհունակութեամբ տպում ենք նուիրատուութեանց իսկական ցուցակը։

ՅՈՒՅԱԿ

Շուրջառաց ստացելոց յԱստուածամօր Աւագ եկեղեցւոյ Հայոց Աստրախանայ։

1·) 1808 Թ. № $^{1}/_{4}$ Դիբայի շուրջառ արծաթեայ աղխիւք· «Մատթէոսի Խալաճեանց։»

2·) 1814 » » $^{1}/_{12}$ Դիբայի շուրջառ արծաթեայ աղխիւք· «Մարգարտի Խաչատրեան, կնոջ Պետրոս քահանայի Երիժանեանց։»

3·) 1827 » » $^{1}/_{16}$ Դիբայի շուրջառ արծաթեայ աղխիւք· «Մանուչակայ Պօղոսեան, կնոջ Յովսէփայ Աստուրեան։»

4·) 1857 » » $^{6}/_{60}$ Զառմախմուրեայ շուրջառ արծաթեայ աղխիւք· «Սիմէոնի Բաղդասարեան Բալասանեանց։»

5·) 1862 » » $^{11}/_{14}$ Զառմախմուրեայ շուրջառ արծաթեայ աղխիւք· «Վառվառեայ Սարգսեան Կիրկիզեանց։»

6·) 1872 » » $^{111}/_{111}$ Դիբայի շուրջառ արծաթեայ աղխիւք· «Սարգսի Մակարեան Մակարեանց։»

Երեցփոխան Սարգիս Թիլեթեանց.

ՅՈՒՅԱԿ

Շուրջառաց, արծաթեայ աղխիւք, մատուցելոց ի վիճակային Կոնսիստորիային Հայոց Աստրախանայ յեկեղեցւոյն՝ որ յանուն Սրբոց Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի· յ30 Մարտի 1887 թ։

№№ շուրջառաց·

3· Դարբանդցի Ցարութիւնի Դանիլովայ, 1831 թ.,

6· Քաղքցի Բէջանի, 1819·,

29· Դարբանդցի Սիմոնի, 1807 թ.,

32· Մկրտչի Բոզատովայ, 1811 թ.,

38· Դալալ Մովսիսի Մօսէյովայ, 1819 թ.,

39· Սիմէօնի Դանիլովայ, 1822 թ.,

Երեցփոխան Ց. Աբգարեանց.

ՅՈՒՅԱԿ

Եկեղեցական զգեստուց՝ նուիրելոց յոմանց բարեպաշտ անձանց քնակչաց Հայոց Աստրախանայ ի դուռն Մայր Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի, ձեռամբ Գեր. Տ. Սուքիաս Սրբազան Եպիսկոպոսի կազմեալ ի 21 Ապրիլի 1887 թուականի։

№ Հատք

1· Շուրջառ ոսկեթել դիպակ ի յիշատակ հոգւոյ Հանգուցեալ Աննայի Դանիէլեան՝ նուիրեալ ի դստերէ նորին Գերազանցուհի Եղիսաբեթէ Օհանեան Շամխաբեանց, Հանգերձ արծաթի արխիւն 1·

2· Ճապիկ դեղին փիրուզայ ի յիշատակ Հոգւոյ Նոյն տիկին Անոյշ՝ նուիրեալ ի նոյն Ճամխարեանցիկ . . . . . 1·

3· Ճապիկ սպիտակ միշուրայ կապոյտ խաչանշանօք ի յիշատակ առողջապահութեան իւրեան, կնոջն և զաւակաց նուիրեալ ի պարոն Յովհաննիսէ Զաքարեան Խօրօխինեանց . . . . 1·

4· Ճապիկք նոյնպիսիք ի յիշատակ Հոգւոյ Յակովբայ Ստեփանոսեան և Ծուշանայ Մելգումեան նուիրեալ ի պարոն Ստեփանոսէ Գրանգուլեանց . . . . . 4·

5· Ճապիկք դեղին միշուրայ՝ նուիրեալք ի պարոն Գէորգայ Մարտիրոսեան Քարխուդարեանց յաղագս յիշատակի Հոգւոյ Հօրն իւրոյ . . . . . 2·

6 Ճապիկք նոյնպիսիք՝ նուիրեալք ի պարոն Խաչատրոյ Լալայեանց յաղագս յիշատակի Հանգուցեալ Հօրն իւրոյ Աւետիսի և Մօրն Աննայի Պօղոսեան . . . . . 2·

7· Ճապիկք կարմիր ծաղկեայ թաւիշ զարշաֆ՝ նուիրեալք ի պարոն Ղազարոսէ Եզեանց յաղագս յիշատակի Հոգւոյ Հօրն իւրոյ Դաւթի և Մօրն Ոսկւոյ . . . . . 4·

8· Ճապիկք սպիտակ փիրուզայ՝ նուիրեալք ի պարոն Սարգսէ Գէորգեան Թիլէմեանց յաղագս յիշատակի առողջապահութեան իւր և ամուսնոյն Եղիսաբեթի Նաթանեանց . . . . 4·

9· Ուրարք դեղին միշուրայք՝ նուիրեալք ի պարոն Եփրեմայ Թադէոսեան Աճդանդարանցեանց և յամուսնոյ նորին Կատարինայ Մինքայելեան . . . . . 8·

10· Ուրարք դեղին դիպակք՝ նուիրեալք յայրի Կատարինայ Յովհաննիսեան Աճդանդարանցեանէ ի յիշատակ Հոգւոյ առն իւրոյ Խաչատրոյ Թադէոսեան Աճդանդարանցեանց . . . . 4·

11· Ուրարք դեղին դիպակք՝ նուիրեալք ի պարոն Համբարձումայ Յովակիմեան Կուլումեանց յաղագս յիշատակի Ծնօղաց իւրոց՝ Յովակիմայ և Եղիսաբեթի . . . . . 8·

12· Սփռոցք արծուէնիշք քղձրիկք, նուիրեալք ի տիկնայց Հռիփսիմեայ Յակովբեան Գալէյեանց և Եղիսաբեթէ Մկրտչեան Պուտիկեանց . . . . . 2·

41·

ՅՈՒՇԱԿ

Նկեղեցական դգեստուց նուիրելոց յոմանց բարեպաշտ անձանց ընակչաց Հայոց Աւստրահանայ ի դուռն Ս. Գեղարդայ վանիցն որ ի Կաւձին, ձեռամբ Տեր Տ. Սուքիաս Սրբ. Եպիսկոպոսի կազմեալ ի 21 Ապրիլի 1887 Թուականի:

№		Հատք
1·	Ճապիկ սպիտակ փիրուզայ՝ նուիրեալ ի տիկնին Վարվառայ Սարգսեան Մատոեանց յաղագս յիշատակի Հոգւոյ Մօրն իւրոյ Աննայի Բէժանեան Պաղտոեանց	1·

2. Շապիկք կերպաս մոդ կտաւիք նուիրեալք ի պարոն Յովսէփայ Յարութիւնեան Կիրէեանց յաղագս յիշատակի հոգւոյ մօրն իւրոյ Եղիսաբէթի Գալստեան . . . . . 2.
3. Գօտի ժամարարի զառ կտոր . . . . . 1.
4 Բազպանք նոյնպիսիք . . . . . 1.
5 Սաղաւարտք զառշտոֆ . . . . . 2.
6. Խաչ մի ձեռաց 84 փորձոյ արծաթեայ ոսկեզօծ ի կշիռ 56 մըսխալի, յորոյ վերայ զետեղեալ են հինգ փինիֆտի պատկերք, ընդ միոյ կերպասեայ թաշկինակի, յիշատակ ի ծերունի Յովհան Քահանայէ Խալաֆեան . . . . . 1.

Ամենն քառասուն և ինն հատ. 49.

Կառավարիչ վիճակին՝ ՍՈՒՔԻԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ.

ՀԱՅՈՒՀԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՏՓԻՍԻՍԻՑ.

ՕՐԱԳԻՐ.

1887 ամի 15 Մարտի Ս. Նշան Եկեղեցւոյ ուսումնարանում կայացաւ Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան ընդհանուր ժողովը նախագահութեամբ ընկերութեան պատուաւոր Նախագահի Թեմական Առաջնորդի Հայոց Վրաստանի և Իմերէթի Գեր. Տ. Արիստակէս Եպիսկոպոսի ի ներկայութեան ընկերութեան 53 անդամոց. Սոյն ժողովը գումարուեցաւ կանոնադրութեան 29 յօդուածի զօրութեամբ՝ ընկերութեան տարեկան եկամտից հաշիւը և նախահաշիւը քննելու և հաստատելու համար։

Նախընթաց այն է, 26 Հոկտեմբերի 1886 ամի ընդհանուր ժողովի օրագիրը կարդալուց և հաստատելուց յետոյ վարչութեան անդամ տիկին Սոֆիա Բաբայեանը կարդաց վարչութեան միամեայ գործունէութեան տեղեկագիրը, որից երևեցաւ որ 1886 ամի Մայիս 4ի ընկերութեան ընդհանուր ժողովի նոր կազմակերպած վարչութիւնը ընտրել է իւր միջից առենապետուհի տիկին Նադեժդա Ալիխանեանին, փոխ-առենապետուհի՝ իշխանուհի Կատարինէ Բէկբուդեանին, և գանձապահ՝ տիկին Վարվառէ Ռօստինեանցին, Վարչութիւնը իմանալով հայ գպրոցների բացման լուրը, շտապեց շարունակել Ս. Նշան եկեղեցւոյ դաւթի մէջ գպրոցի շինութեան գործը, որ հայ դպրոցների փակման պատճառաւ դադարած էր, թէպէտ այդ շինութիւնը գլուխ բերելու համար նախահաշիւով որոշած էր ծախսել 4500 ռուբ. սակայն վարչութիւնը շինութեան վերայ ծախսել է 6503 ռ. որովհետև շինութիւնը կատարելու միջոցին յայտնուել են մի քանի անհրաժեշտ ծախսեր որոնք նախատեսուած չեն եղել սկզբում կազմած նախահաշուի մէջ, Այսպէս գպրոցի սենեակները աւելի բարձր և լուսաւոր անելու համար հարկա-

ւոր է եղել գետնից ցօկօլը բարձրացնել, որի վերայ նախահաշուից դուրս ծախսել է 200 ռ. հիմքը՝ պայմանից դուրս 10 խորանարդ սաժեն փորելու և շինելու համար 450 ռ. դպրոցի ստորին յարկը բնակութեան համար յարմարացնելու համար հարկաւոր է եղել պատշգամբի տակ շինել սրահ, որ նստել է 300 ռ. որովհետև տեղի անյարմարութեան պատճառաւ անկարելի է եղել շինել կոյուղի, ուստի նախահաշուի մէջ չնախատեսուած մի աղիւսապատ հոր է շինուել, որ նստել է 120 ռ. գաւթի քայքայեալ պատը հիմնովին շինելու, գաւիթը սալայատակելու և երկու դուռը կանգնացնելու համար ծախս է եղել 570 ռ. վերահսկող ճարտարապետին տրուել է վարձ 200 ռ. և մանր ծախքեր՝ այն է կապալառուի հետ պայմանագիր հաստատելու, շինութեան պլանը կազմելու և այլն 163 ռ. 60 կ. Ա յս 6503 ռ. 60 կ. գումարի մէջ ստացուել է 2250 ռ. Ս. Նշան եկեղեցուց 197 ռ. Հանգանակուած է Սրբազան Առաջնորդի հրամանաւ, 250 ռ. ընծայել է մեծ տիկին Նատալիա Էնակոլոփեանը, իսկ մնացեալը այն է 3806 ռ. 60 կ. ծախսուել է ընկերութեան գումարից։ Վարչութիւնը 27 Հոկտեմբերի ընդհանուր ժողովի թոյլտուութիւնը ստանալով դիմել է Թիֆլիսի արհեստաւորաց գաստակարգի վարչութեանը, որ սա հաղորդէ վարչութեան այդ գասակարգի որբ և չքաւոր ընտանեաց ցուցակը և նոցա հասցէները։ Ստանալով այս տեղեկութիւնը՝ վարչութիւնը յանձնել է իւր անդամներին 104 ռ. գումարը որ նոքա անձամբ Դեկտեմբերի 30-ին բաժանել են ցուցակում նշանակուած անձանց և ընտանեաց մէջ, ուր 3, ուր 5, ուր 10 ռուբլի նայելով ընտանեաց անդամների թուի և դրութեանը։

Վարչութիւնը սոյն ամի ընդունել է Զրկինեանց եկեղեցւոյ ուսումնարանի նախկին վարչութիւնից 1987 ռ. և ստանալու է կրկին 30 ռ. նաև զանազան պիտոյքներ և կարասիք, այն պայմանով որ՝ այդ գումարից տրուի նորա 150 ռ. պարտքը, իսկ մնացածից անձեռնմխելի դրամագլուխ կազմել, և նորա տոկոսիքով ուսուցանել Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի մէջ 15 աշակերտուհի գլխաւորապէս Զրկինեանց եկեղեցւոյ թաղից։ Վարչութիւնը համաձայն այս պայմանի՝ ընկերութեան գումարից էլ մի մասը միացնելով ստացած գումարին՝ գնեց 2000 ռ. արքունական արժէթուղթ։

Վարչութիւնը իւր սրբազան պարտք է համարում յայտնել իւր խորին շնորհակալութիւնը հետևեալ անձանց։ Իշխանուհի Մարամ երկայնաբազուկ Արղութեանցին, որ նուիրել է 25 ռ. երեք որբ և չքաւոր օրիորդաց տալու համար, բարեկրօն Հռիփսիմէ կոյս Թայիրեանին, որ խոստացել է տալ իւրաքանչիւր տարի 20 ռ. Ս. Նշան եկեղեցւոյ աշակերտուհեաց համար կարևոր դէպքերում դեղօրայք գնելու։ Պարոն Եսայի Փիլոյեանին՝ որ իւր մասնաւոր թատրոնում տուած է յօգուտ ընկերութեան մի ներկայացում և նորանից ստացած 225 ռ. արդիւնքը ուղարկած է վարչութեան։ պ. պ. Բաղդասար և Զաքարիա եղբարց Աբովեանցներին որոնք նուիրած են Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի համար Թագաւոր Կայսեր պատկերը փառահեղ շրջանակով, Ս. Նշան եկեղեցւոյ երիցփոխան պ. Յովհաննէս Տէր Կարա-

պետեանին որ չէ խնայում իւր ձեռքից եկածը, յօդուտ սոյն դպրոցի, Հայր Եղնիկ Երզնկեանին, Օր. Վարվառէ Միրիմանեանին, և պ. Նիկողայոս Գրիգորեանին որոնք ձրիաբար ուսուցանում են, առաջինը Երգեցողութիւն, երկրորդը՝ Ռուսաց լեզու, և երրորդը՝ Գծագրութիւն Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի մէջ, տիկին Բաբայեանը վարչութեան կողմից աղդարարեց ժողովրդականներին որ առաջիկայ Սեպտեմբեր ամսից դպրոցի մէջ կբացուի երրորդ բաժանման մի դուգընթաց դասատուն, ուր աշակերտուհեաց հետ առանձնապէս կըպարապին ձեռագործով։ Բայց որովհետև ներկայ շինութեան մէջ չկայ յարմար սենեակ, ուստի վարչութիւնը խնդրումէ նախահաշուից դուրս նշանակել 500 ռ. որպէս զի եկեղեցւոյ գաւթում կանգնած մի սենեակից բաղկացած ընակարանը այդ գումարով նորոգուի դասատան համար յարմարացնելու և հարկաւոր կահ կարասիք ձեռք բերուի, նաև խնդրումէ հաստատել նախահաշուի մէջ դպրոցի համար որոշած ծախսը ամբողջապէս, որովհետև այդ դասատունը բանալու պատճառաւ դպրոցի վերայ հարկաւոր է լինում ծախսը աւելացնել։

Ա յնուհետև վարչութեան Ատենադպիրը կարդաց անցեալ 1886 տարուայ ելևմտից հաշիւը, որից երևեցաւ, որ ընկերութիւնը ունեցել է մուտք նուիրաբերութիւններից 2511 ռ., 166 տարեկան անդամից և մի մշտական անդամից 1096 ռ. պարահանդէսից և կոնցերտից 1885 ռ. 75 կ., տոկոսիք ընկերութեան գումարից 496 ռ. 45 կ., Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի շինութիւնն կառուցանելու համար 567 ռ., ընդամենը ստացել է սոյն տարի 6556 ռ. 20 կ., ունեցել է առ ձեռն դրամ 6761 ռ. 18 կ. և անձեռնմխելի գումար արժէտոմսերով 4726 ռ. 40 կ. համագումար 1843 ռ. 78 կ. սոյն ժամանակամիջոցում ծախս է եղել՝ Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի պահպանութեան համար 855 ռ. 70 կ., սոյն դպրոցի շինութեան և կրակի ապահովութեան համար 6057 ռ. 10 կ., այլ և այլ ուսումնարանաց և ուսանողաց տուած է և ջրօրհնեաց տօնին բաժանած է 469 ռ. 45 կ., և գիւանական և այլ վարչական մանր ծախսերի համար 143 ռ. 93 կ., ընդամենը ծախս է եղած 7526 ռ. 18 կ. ունի առ 1ն Մարտի 1887 թիւ առ ձեռն գումար 28 ռ. 31 կ. ընթացիկ հաշիւ առևտրական բանկում 3720 ռ. 45 կ., անձեռնմխելի գումար արժէտոմսերով 6768 ռ. 84 կ., գումար գրամից 10517 ռ. 60 կ., համագումար ծախուց հետ 18043 ռ. 78 կ., նաև կարդացուեցաւ վարչութեան կազմած նախահաշիւը սկսեալ 1ն Մարտի 1887 թիւ մինչև Մարտի 1ն 1888 թիւ, որից երևեցաւ որ մուտքը որոշած է ըստ հետևելոյն՝ 2 մշտական և 150 տարեկան անդամից 1100 ռ. պարահանդէսից, կոնցերտից և այլն 1500 ռ. նուիրաբերութիւնից 100 ռ. ընկերութեան գումարի տոկոսիք 400 ռ. գումար 3100 ռ. սոյն ժամանակամիջոցի համար որոշուած է ծախս Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի պահպանութեան համար 2282 ռ., այլ և այլ ուսումնարանաց միանուագ օժանդակութեան և չքաւոր անձանց և ընտանեաց բաժանելու համար 500 ռ. դիւանական և այլ ծախսերի համար 70 ռ. գումար 2852 ռ., Ընդհանուր ժողովը քննելով թէ ելևմտից

հաշիւը և թէ նախահաշիւը երկուսն էլ միաձայն հաստատեց, նաև որոշեց նշանակել ընկերութեան գումարից 500 ռ. վարկը, որով վարչութիւնը կարողանայ Ս. Նշան եկեղեցւոյ գաւթի հին բնակարանը նորոգել երրորդ բաժանման գուգընթաց դաստատան յարմարացնելու համար և այդ դաստատան կարեւոր կահ կարասիքը ձեռք բերելու։

Ընկերութեան պատուաւոր նախագահ Սրբազան Առաջնորդը պահպանիչով օրհնեց ժողովրդականներին և ժամը 1ն զկնի ճաշու գոցեց նիստը։

Պ-ինոպոլիս Վ-ըլ-ոնեան Ա. Քիշմիրեան։

Խմբագրոնեան «Արարատ» պաշտաւնական ամսագրոյ

Ս. Էջմիածնի միաբան և Երնջակու Սուրբ Կարապետի վանուց Վանահայր Գերապատիւ Տ. Սերովբէ Սրբազան Եպիսկոպոս Արարատեանը իւր «Համառօտ Բարոյագիտութիւն» վերնագրով երկասիրութիւնից հրէ-ր յետոյ օրինակ նուիրել է Վաղարշապատի երկսեռ դպրոցներին, և որովհետև Հոգաբարձութիւնը արդէն ստացած է այդ պատուական ընծան Սինոդի անդամ և Ս. Էջմիածնի Տպարանական Ժողովոյ նախագահ Գեր Տ. Արիստակէս Սրբ. Եպիսկոպոսի միջոցաւ, ուստի Վաղարշապատի երկսեռ դպրոցների Հոգաբարձութիւնը պատիւ է համարում «Արարատ» ամսագրոյդ միջոցաւ յայտնել իւր խորին շնորհակալիքը Սրբազան Արարատեանին ի գիտութիւն հասարակաց։

Անդամ Հոգաբարձութեան Մկրտիչ Ենգիբարեանց։

Մայիս 8, 1887 ի. Վաղարշապատ։

Տփխիսու Հայոց Ներսիսեան հոգևոր դպրոցի Հոգաբարձութիւնը անցեալ Ապրել ամսի 16 ին գրութեամբ խնդրում էր հրատարակել ի գիտութիւն հասարակաց որ պ. Կոստանդին Ալիխանեանցը իւր հանգուցեալ հօր Միքայէլ Գէորգեան Ալիխանեանցի յիշատակի համար հանգուցելոյ ցանկութեան համեմատ յանձնել է նոյն գպրոցի Հոգաբարձութեան մի հազար րուբլի ի նպաստ շինութեան դպրոցին, որ տոկոսիքովը միասին անձեռնմխելի պիտի մնայ մինչև գպրոցի շինութեան սկսուիլը։

Հոգաբարձութեան շնորհակալեաց արտայայտութեան հետ միացնում ենք և մեր բարեմաղթութիւնը, ակնթելով որ Աստուած լուսաւորէ և արդարոց հետ դասէ հանգուցելոյ հոգին, յիշատակները օրհնէ և ազգիս մէջ նոյնպիսի զգացմամբ մարդիկ շատ յարուցանէ ի շինութիւն ազգի և եկեղեցւոյ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԿ

—

Ընորհակալութեամբ ստացանք

Ա. «Հայաստանի Առաջին Լուսաւորիչները Ս. Թադէոս և Բարթուղիմէոս» Պ. Բագարատ Միրիմանեանի «Ժողովրդական գրադարան»-ի 5 որդ հրատարակութիւնն, գիրն է հինգ կոպէկ։

Ինչպէս այս 5-որդ նոյնպես և 4 որդ հրատարակութիւնը «Վարդանանք» արտատպուած են Արարատ ամսագրից։

Գրքոյկի ներքին արժանեաց մասին մեզ իրաւունք չենք համարում խօսել, որովհետև մենք մեզ դատել չենք կարող. միայն Պ. հրատարակչի ուշադրութիւնը հրաւիրում ենք այն հանգամանքի վերայ, ա. որ նա յօդուածները նախ քան արտատպելը յայտներ աշխատասիրողին, որ վերջինս միջոց ունենար յօդուածը յարմարացնել առանձին գրքուկով հրատարակութեան. բ. որ յօդուածները արտատպելիս՝ լաւ ուշադրութիւն դարձներ տպագրական սրբագրութեանը և փակագծի մէջ այնպիսի բացատրական բառեր չը դրուէին, որոնք հակառակ իմաստ ունեն կամ ճշտութեամբ չեն արտայայտում այն՝ ինչ որ դժուար հասկանալի է կարծվում։

Զ. եր. 7 որդ երրորդ պարբերութեան մէջ դրուած է «Վերին Հայք (Երզրումի կողմերը)» — Երզրումի կողմերը Բարձր—Հայք էր կոչվում, նոյն պարբերութեան մէջ՝ «Շաւարշան կամ Արտազը (Իշքիլիսայի մօտերքը)» — Շաւարշան կամ Արտազը Իշ—Քիլիսայի մօտերքը չէ. Իշ—Քիլիսան գտնվում է Բագրեւանդում՝ Տաճկաց պետութեան մէջ, իսկ Արտազը Մասիս լերան արեւելեան կողմը՝ Պարսից պետութեան Մակուի խանութեան մէջ. «քարոզեց Սիւնեաց (Դարալագեազ) աշխարհում»։—Սիւնեաց աշխարհը միայն Դարալագեազը չէր, այլ Դարալագեազը ընդարձակ Սիւնեաց աշխարհում մի գաւառակ էր Վայոց ձոր անուամբ՝ վիճակեալ Արտազու հովուութեան։

«Ժողովրդական Գրադարանի» տեարակները հրատարակողի հասցէն՝ Թիֆլիս Սապովայեա փողոց № 40. Адресъ: Тифлисъ Tiflis (Caucase) Садовая улица, № 40. Баграту Мириманянцу.

—

Բ. «Վէպ թէ պատմութիւն» (Ղարաբաղի անցեալը Ապրէս Բէգնազարեանցի գրչի տակ) մատենախօսութիւն. Լէօ. Շուշի, տպարան Հայոց Հոգ. տեսչութեան 1887. Գինն է 40 կոպէկ հասցէ՝ Въ Г. Шушу, книжный магазинъ бр. Дадіанъ.

Գրքոյկի նպատակն է ապացուցանել որ Արժ. Մակար վարդապետ Բարխուդարեանի հրատարակած և ոմն Ապրէս Բէգնազարեանին վերագրած «Գաղտնիք Ղարաբաղի» գիրքը պատմութիւն չէ, այլ վէպ է։

«Գաղտնիք Ղարաբաղին» դեռ չը հրատարակուած նիւթի դարձաւ քննադատութեանց և հրատարակուելուց յետոյ ևս դարձեալ նոյն վիճակի մէջ է. վերջին դարուս հայ մատենագրութեան մէջ ոչ մի գիրք այնքան տարաձայնութեան տեղի չէ տուել՝ ինչպէս «Գաղտնիք Ղարաբաղին» է։ Մենք արդէն ապացուցեալը չենք աշխատիլ նորից ապացուցանել. ուշի ուշով կարդալուց յետոյ՝ այն եզրակացութեան եկանք՝ որ Հայր Մակար վարդապետ Բարխուդարեանը կամ ինքն է խմբագրել «Գաղտնիքը» Ղարաբաղում՝ յեղյեղուղ ժողովրդեան աւանդութիւնները ի մի ամփոփելով և միայն իր խնածախոյզ հայրենակիցներին հերոս հանդիսացնելով, կամ մի այդպիսի դիտաւորութեամբ պատրաստ գիրք ստացել է ուրիշից, և յանձնէս՝ որպէս ժամանակակից պատմչի գործ հրատարակել է։ Բայց մենք առաջին կարծիքի ենք, որովհետև արդէն իրրև փաստ ունենք Հայր Մակար վարդապետի վիպական մի ուրիշ գրուածքն ևս, ուր նա քան ընդունուած սովորութեան իր

վիպելի անցքը պատմումէ ուստայ Գէորգ Բարխուդարեանի բերանով. մի գուցէ Ապրէս Բէգնազարեանն ևս նոյն ուստայ Գէորգ Բարխուդարեանը լինի, որ Խնածախի վիպական անցքից յետոյ դիմելով Ս. Էջմիածին՝ երասխի և Իգդիրի վերայով անցնումէ Տաճկաստան ու այնտեղ այցելելով զանազան տեղեր՝ երկար ժամանակով մնումէ Երուսաղէմումՙ և ուր յատուկ նպատակով գանձակեցի մի միաբանից խնդրումէ Մխկին Բուրջիի երգը՝ Մագաթովի ու Արաս Միրզայի Գանձակի մօտ պատերազմի մասին երգած։ Արդեօք տաճկահայոց տառագրութիւնը չէ ապացուցանումՙ որ ուստայ Գէորգը —ծպտեալ Ապրէս Բէգնազարեանը դեռ Երուսաղէմումՙ եղած ժամանակ է գրելիս եղել «Գաղտնիքը» այն ևս՝ Տաճկաստանի բարբառովՙ և վերագառնալով հայրենիքՙ վերածել է «պոլ» ի Արարատեան բարբառի. և Եղիշէի ընտիր ոճ համարած ընագիրը պէտք չէ՞ հասկանալ տաճկահայոց բարբառը, Ահա մեր կարծիքը Գաղտնիքի վերաբերութեամբ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.

(ՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ).

ՎԱՐՉԱԿԱՆ.

18 Մայիսի. Ըստ կոնդակի Վեհափառ Կաթուղիկոսի № 233 Մայիս 4, Սինօդը որոշեց Գեր. Տ. Գէորգ Սրբ. Եպիս. Սուրբհանցին արձակելով Երևանայ Թեմի առաջնորդական փոխանորդի պաշտօնից՝ ճանաչել Աստրախանի Հայոց Վիճակաւոր Առաջնորդ, պատուիրելով Նորին Գերապատուութեանը Երևանի փոխանորդութեան գործերը և առաջնորդարանի կահ կարասիքը օրինաւոր դուջակով յանձնել կոնսիստորիայի անդամից ի պահպանութիւն և ուղևորելով Աստրախան՝ ստանալ նոյն Թեմի առաջնորդական գործերը և պաշտօնավարութեան օրից սկսեալ առաջնորդի սահմանեալ ուճիկը ստանալով՝ վարել իւր նոր պաշտօնը։ Սինօդը իւր այս տնօրէնութեան համար որոշից տեղեկութիւն տալ Աստրախանի և Երևանայ կոնսիստորիաներին։

—

18 և 4 Մայիսի. Ամենայն կառավարիչ Գերապատիւ Տ. Թադէոս Սրբ. Արքեպիսկոպոս Զիւնական, և Աստրախանի կառավարիչ Գեր. Տ. Սուքիաս Սրբ. Եպիսկոպոս նշանակուած լինելով Սինօդի անդամ և հաստած լինելով Մայր Աթոռս՝ Սինօդը որոշեց հրաւիրել նոցին Սրբազնութեանց իրանց պաշտօնը վարելու ներկայ լինելով ատենական խորհրդակցութիւններին։ Իւր այս տնօրէնութիւն Սինօդը իւր դիւանական կարգապահի ձեռամբ յայտնեց նոցին Գերապատուութեանց ի գիտութիւն։

—

27 Ապրիլի. Վեհափառ Հայրապետն աղդիս Տ. Տ. Մակար Սրբազնագոյն Կաթուղիկոս տարւոյս Ապրիլի 19ին № 205 կոնդակով ծանուցանելով Սինօդին որ արքունի ճարտարապետի և տեղական վարպետների զննութեամբ հասու լինելով Մայր Տաճարի տանեաց վերանորոգութեան անհրաժեշտութեանը՝ պատուիրումՙ Սինօդին կարգադրել ինչ որ պէտք է. Սինօ-

դը որոշեց Տաճարի վերանորոգութեան գործը յանձնել Վանական Կառավարութեան Անդամից՝ տալով նոցա մի ժապաւինեալ տոմար որ պատրաստելով հարկաւոր նիւթերը՝ Նորին Վեհափառութեան կանխագոյն հաճութեամբ սկսեն վերանորոգութիւնը. հարկաւոր ծախքը հետ գՀետէ ստանան գանձարանից և շինութեան աւարտմանից յետոյ ծախուց մատեանը ներկայացնեն Սինօդին ի զննութիւն։

—

27 Ապրիլի. Ըստ կոնդակի Վեհափառ Կաթուղիկոսի Սինօդը նկատելով որ Երևանայ Թեմում միայն Կոնսիստորիայից ծննդական վկայական ստանալու համար մեծամեծ նեղութիւններ են քաշում ժողովրդականք, որոշեց ա. ըստ 1047 յօդուածոյ 9 րդ հատորոյ օրինաց տէրութեան՝ Թոյլ տալ քահանաներին որ տան ծննելոց մատեանից միայն բառ առ բառ քաղուածներ կնքուած եկեղեցւոյ կնքով. այս տեսակ թղթերը ըստ 1053 յօդ. կըծառայեն իբրև փաստ, ուստի նոքա որոնք կստանան այս տեսակ վկայականներ՝ պէտք (ըստ 989 յօդ. Ա. մասին ԺԱ. հատ. օրինաց տէրութեան ի լոյս ընծայելոյ 1857 թ.) առաջարկեն Հոգևոր կառավարութիւններին վաւերացնել, իսկ Հոգ. կառավարութիւն չեղած տեղը գործակալ քահանաներին. Բ. պարտաւորել Հոգ. կառավարութիւններին և գործակալներին՝ որ նոքա նախքան վաւերացումն այս տեսակ քաղուածների, ի նպաստ թեմական դպրանոցի, հարուստներից 5 րուբլի, միջակ հարուստներից՝ 3 րուբլի, չքաւորներից՝ 1 րուբլի ստանան և անուանական ցուցակով ներկայացնեն Երևանայ վիճակային կոնսիստորիային հաւուցանելու՝ թեմական դպրանոցին. Գ. յայտնել գիւղօրէից ժողովրդին, որ, ուր որ եկեղեցիներում չեն գտնուիլ կամ պահպանուած չեն լինիլ արձանագրութեան մատեանների հաւատարմագոյն պատճէններ, նոքա պէտք դիմեն Երևանայ Հայոց Կոնսիստորիային այն տեղից վկայական ստանալու։

—

22 Ապրելի, Սինօդը ըստ հաճութեան Վեհափառ Կաթուղիկոսի որոշեց Ղզլարու փոխանորդ Արժ. Գրիգոր Վարդապետ Գառնակերեանցին արձակել իւր պաշտօնից և կոչել Մայր Աթոռս ուրիշ պաշտօն յանձնելու։

—

22 Ապրելի. Սինօդը առաջարկութեամբ Վեհափառ Կաթուղիկոսի ըստ Բարձրագոյն Թոյլտուութեան որոշեց Ա. Կարսայ նահանգի եկեղեցիքը և եկեղեցական գործերը միաւորել Երևանայ Թեմին. Բ. Քութայ՛սու նահանգի Բաթում՝, Արդուին և Սուխում՝ նահանգների հին եկեղեցիքը և եկեղեցական գործերը միաւորել Տփխիսու Վիճակի հետ և պատուիրեց նոյն կոնսիստորիային կառավարել այդ տեղերը գործակալների ձեռքով. Գ. Կարս քաղաքում բանալ Հոգևոր կառավարութիւն և սահմանել փոխանորդութիւն, փոխանորդ նշանակելով Գեր. Գրիգորիս Եպիսկոպոս Աղուանեանցին, Դ. յանձնել Գեր. Մեսրոպ Եպիսկոպոսին որ գնայ Կարս այս տնօրէնութիւնները ի կատար ածէ—տեղւոյն փոխանորդի խորհրդակցութեամբ ու հաճութեամբ երկու արժանաւոր քահանաներ կարգէ անդամ Հոգ. կառավարութեան, և ինչպէս անդամներին, նոյնպէս և փոխանորդ Գեր.

Գրիգորիս Եպիսկոպոսին երդմնեցնէ հաւատարիմ ծառայութեան համար. Ե. յանձնել նոյն Գեր. Մեսրոպ Եպիսկոպոսին որ հայ և ռուս լեզուաց և կօլլեգիական կարգի մի ընդունակ մարդու կարգէ քարտուղար և առաջարկէ փոխանորդին ու Հոգ. կառավարութեան անդամից որ խորհրդակցութեամբ և կօլլեգիական կարգով ըստ հրահանգութեան Սինօդի և ըստ տրամադրութեան օրինաց վարեն գործերը։ Գեր. Գրիգորիս Եպիսկոպոսի վարած մտից և ծախուց հաշիւները պատրաստի դրամների հետ օրինաւոր ցուցակով ստանայ և անդամից ու քարտուղարի ստորագրութեամբ յանձնէ Հոգ. կառավարութեան, և ցուցակի օրինակը ուղարկէ Սինօդին. պատուիրէ Գեր. Գրիգորիս Եպիսկոպոսին որ վիճակային և այլ արդիւնքները գիտութեամբ անդամից կառավարութեան մէջ ստանայ և յանձնէ գանձապահին ի պահպանութիւն, և այդ պաշտօնի համար իսկոյն կարգէ անդամներից մէկին. Զ. Յանձնել նոյն Գեր. Մեսրոպ Եպիսկոպոսին որ վիճակային արդիւնքից փոխանորդին ուղիղ կարգէ տարին 700 րուբլի, քարտուղարին՝ 300 րուբլի, ստորոժին 70 ռ. դիւանական ծախուց համար 60 րուբլի, ընդ ամենայն 1130 րուբլի. և պատուիրէ չերմստահանալ նշանակածից աւելի ծախս անել, և պարտաւորէ որ աւելացած դրամները չորս ամիսը՝ միանգամ՝ ուղարկեն Սինօդին, իսկ անակնունելի և կարևոր ծախքերի համար Սինօդից միշտ լուծուն խնդրեն Ե. որոշեց այս մասին տալ տեղեկութիւն Երեւանայ կոնսիստորիային և Արարատի միջոցաւ՝ բոլոր կոնսիստորիաներին ու Հոգ. կառավարութեանց։ Առաջադրեց Կարսայ նոր բացուած Հոգ. կառավարութեան, վիճակային արդիւնքով ընդ փոյթ գնել մի զերցալ և մի պատկեր Թագաւորի կայսերի։

—

15 Ապրիլի։ Սինօդը որոշեց Մայր Աթոռոյս միաբան Արժ. Ներսէս Աբեղային կարգել անդամ Վանական կառավարութեան Մայր Աթոռոյս։

Ա Զ Դ.

Մխիթարական երէցոյթ է, որ ի տեղեաց տեղեաց Հայ ժողովրդականը վկայելով իւրեանց քահանայից բարւոք գնացից և վարուց մասին, խնդրուէն Հոգ. Մայրագոյն Իշխանութիւնից վարձատրութիւն. բարւոք կլինէր, որ այսպիսի վարձատրութիւնները խնդրելին նոքա իւրեանց վիճակաւոր Առաջնորդի միջոցաւ։

Հնութիւնք Հայրենեաց	—	40
Հոգովհական եկեղեցի	—	80
Հանդէս բացման Ճեմարանի	—	10
Հրահանգ քերականութեան	—	30
Հրահանգ աւագ քահանայից	—	10
Հրահանգ վասն թեմական տեսչաց	—	20
Ձայն բաղմաց	1	—
Ձայնագրեալ երգեցողութիւնք Ծամագրոց	8	—
Ձայնագրեալ երգեցողութիւնք Ս. Պատարագի	3	—
Ձայնագրեալ շարական յԵռաց	60	—
Ճանապարհորդութիւն Հակստհաուզէնի	—	80
Ճաշոց	60	
Մաղթանք վասն Հայրապետի ազգիս	—	20
Մաշտոց ձեռնադրութեան քահանայից և Մ. իշխանութեան	4	—
Ծաւելուած Ծամագրոց ձայնագրեալ	—	20
Նախակրթանք. Բ. մասն	—	45
Նոյն Գ. մասն	—	50
Ուխտանէս եպիսկոպոսի պատմագրութիւն	1	20
Ուղղագրութիւն	—	50
Պատմութիւն ժողովոյ Հայաստանեայց եկեղեցւոյ	—	40
Պատմութիւն Խաչակրաց	—	30
Պատմութիւն Հնոյց Լեհաստանի	—	30
Պատմութիւն Հռոմոսի Վանուց ի Շիրակ	—	20
Պատմութիւն Սեւանայ	—	20
Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ	2	—
Պատկերաւէր պատկերատեաց	1	—
Ջամբռ (պատմագրութիւն Սիմէօն Կաթուղիկոսի)	1	—
Սաղմոս Դաւթի	1	—
Սկզբունք բուսաբանութեան	—	15
Վաղարշապատ	—	50
Տեղեկագիր Ճեմարանի 1881—82	—	10
Նոյն 1882—83	—	10
Փնար Մշեցւոյ և Վանեցւոյ	—	30
Օրացոյց (1887)	—	20
* Օրէնք վայելուչ կենցաղավարութեան	—	40

(*) Աստղանիշ գրեանք հրատարակուած են սեպհ. տեղեր։

20 րուբլուց աւելի գնողին եւ կանխիկ վճարողին զեղջումն կը լինի 20°/₀ին (ճանապարհածախքը գնողի վերայ)։

„ԱՐԱՐԱՏ“

ԱՄՍԱԳԻՐ

Կը հրատարակուի ամիսը մի անգամ. բաժանորդագրութիւնը տարեկան է և սկսւում է Յունվար ամսից. բաժանորդագինն է Ռուսաստանում՝ 4 րուբլի. Տաճկաստանում, Պարսկաստանում և Եւրոպայում՝ 5 րուբլի, Հնդկաստանում 6. ր.

Տրագիրն է

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՑԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՑԻՆ.

Արարատում կը հրատարակուեն նաև Վեհափառ Կաթուղիկոսի և Սինօդի կողմից եղած վարչական այլ և այլ հրահանգութիւնները և Սինօդի օրագրութիւններից քաղուածներ։

Արարատում կը հրատարակուեն յիշատակարաններ՝ ըստ և պատմական աղբիւր. կարատասպուեն լրագրներից իւր ուղղութեանը յարմար յօդուածները, զետեղելով ըստ բովանդակութեան։

Կը հրատարակուեն նաև լուրեր «Այլ և այլք» վերնագրով։

Հայաբնակ քաղաքներում և գաւառներում ստորագրուել ցանկացողները թող դիմեն տեղական Հոգ. իշխանութեան գործակալներին կամ ուղղակի Ս. Էջմիածին. Հասցէն Эчміадзинъ. Типогр. Комитетъ—Տպարանական ժողովին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տպար. ժողովս խնդրում է Մոզդոկի, Գրիգորիօպօլու, Թէոդոսիոյ, Խարասուբազարի, Ս. Խաչ քաղաքի, Կողբի, Շարուրի, Թալինու, Լօռուայ, Մելիտօպօլի գործակալներից շուտով հասցնել Արարատի ներկայ տարուայ բաժանորդաց ցուցակն։